

ՄԱԿ ՓԳՀ

Միավորված Ազգերի փախստականների գործակալություն

2014թ. հոկտեմբեր

ՄԱԿ ՓԳՀ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԻՐԱՔ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ԽՆԴԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներածություն

1. 2012թ.-ին «Իրաքից ապաստան հայցող անձանց համար միջազգային պաշտպանության անհրաժեշտության գնահատման ՄԱԿ ՓԳՀ Ուղեցույցի»¹ եւ «Իրաքում պաղեստինցի փախստականների վերաբերյալ 2012թ. հուշաթերթի»² հրատարակումից հետո Իրաքում բռնության նոր ալիք բարձրացավ մի կողմից Իրաքի անվտանգության ուժերի (ԻԱՌԻ) եւ Քրդական զինված ուժերի (*Պեշմերգա*) միջեւ, մյուս կողմից եւ Իրաքի, եւ Սիրիայի տարածքում գործող «Իրաքի եւ Էլ-Շամի իսլամական պետություն» խմբավորման (այսուհետ՝ ԻՇԻՊ) եւ դրա հետ համագործակցող այլ զինված խմբավորումների միջեւ:³ Բռնության այդ ալիքի, ներառյալ մահապարտների կողմից իրականացվող հարձակումների, ավտոմեքենաների պայթեցումների, հրետանային, օդային ուժերի զորավորումների եւ մահապատիժների արդյունքում ամեն օր սպանվում կան վնասվածքներ են ստանում խաղաղ բնակիչները: Ինչպես հաղորդվում է, ԻՇԻՊ խմբավորման հաջողությունների արդյունքում Իրաքի կառավարությունը լիովին կամ մասնակիորեն կորցրել է իր վերահսկողությունը երկրի տարածքի զգալի հատվածում, մասնավորապես Ալ-Անբար, Նայնավա, Սալահ Ալ-Դին, Քիրքուք եւ Դիյալա նահանգներում: Չնայած ԱՄՆ-ի կողմից իրականացվող օդային ուժերի միջոցով Իրաքի անվտանգության ուժերին եւ Քրդական զինված ուժերին վերջերս հաջողվել է վերահսկողություն հաստատել հատկապես Իրաքի Քուրդիստանի ներքին սահմանագծին մոտ գտնվող մի շարք տարածքներում⁴ ընդհանուր առմամբ, սահմանագիծն անընդհատ փոփոխվում է: Հակամարտությունը, որն ավելի սրվեց Ալ-Անբար նահանգում 2014թ. հունվարին եւ այսուհետեւ տարածվեց մյուս նահանգներում, որակվում է որպես ոչ միջազգային բնույթ կրող զինված

¹ ՄԱԿ Փախստականների հարցերով զերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), «Իրաքից ապաստան հայցող անձանց համար միջազգային պաշտպանության անհրաժեշտության գնահատման ՄԱԿ ՓԳՀ Ուղեցույց», 31 մայիս 2012թ., HCR/EG/IRQ/12/03, <http://www.refworld.org/docid/4fc77d522.html>: Սույն փաստաթղթում ներկայացվող «Իրաքի խմբավորումներ» եզրն արդիական է, սակայն, իհարկե, հարկ է կիրառել այն ծագման երկրի վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվության համատեքստում:

² ՄԱԿ ՓԳՀ, 2006թ. վերանայված հուշաթերթ. *Ուղեցույց Իրաքում պաղեստինցի փախստականների պաշտպանության վերաբերյալ*, հուլիս 2012թ., տե՛ս հետևյալ հղումով՝ <http://www.refworld.org/docid/500ebee22.html>:

³ «Իրաքի եւ Էլ-Շամի ինքնահռչակ իսլամական պետությունը» (ԻՇԻՊ) (արաբերեն՝ *Ad-Dawlah Al-Islamiyyah fi Al Iraq wa Al-Sham*) նաեւ հայտնի է (նախկինում) որպես «Իրաքի իսլամական պետություն» (ԻԻՊ) կամ «Իրաքի եւ Լեվանտայի իսլամական պետություն» (ԻԼԻՊ) եւ նաեւ նշվում է որպես «Իսլամական պետություն» (ԻՊ): Չնայած ԻՇԻՊ-ը ներկայիս հակամարտությունում առավել նշանակալից հակապետավարական ուժն է՝ մի շարք այլ զինված խմբավորումներ, այդ թվում՝ Նաբաթախի գործը (ՆՏԶ), 1920-ականների Հեղափոխական ժողովուրդը, Անար Ալ-Իսլամ շարժումը, Իրաքի իսլամական գործը եւ որոշ սունիթական ցեղախմբեր նույնպես ակտիվ մասնակցություն են օժնեցում հակամարտությանը: ՄԱԿ ՍԳԶԳ, *Անկարկ հունանիտար կարիքների վերաբերյալ, 26 սեպտեմբեր, 2014թ.*, էջ 6, <http://bit.ly/1xg0fCB>, BDC - *Հզորության Իրաքում. Սունիթական ապստամբության հիմնական մասնակիցները*, 1 հուլիս 2014թ., տե՛ս հետևյալ հղումով՝ <http://bbc.in/1EGGtd0>

⁴ Իրաքի Քուրդիստանը ներառում է Դահուկ, Էրբիլ եւ Սուլեյմանիա նահանգները, որոնք գտնվում են Քուրդիստանի տարածաշրջանային կառավարության (ՔՏԿ) իրավասության ներքո: Ավելին, ՔՏԿ-ն *դե ֆակտո* վերահսկում է մի շարք տարածքներ, որոնք վիճելի տարածքներ են համարվում վերջինիս եւ Իրաքի կառավարության միջեւ: Տե՛ս օրինակ, Ֆրանսալիս գործակալություն, *Քուրդիստանի հարձակումը թույլ տվեց Իրաքի քրդերին գրավել վիճելի տարածքներ, 12 հունիս, 2014թ.*, տե՛ս հետևյալ հղումով՝ <http://shar.es/1mefrU>: Տե՛ս նաեւ 29-րդ ռազմաօդային ուժերը:

հակամարտություն:⁵ Այսպիսով, 2006-2007թթ. աղանդավորական հակամարտությունից⁶ հետո 2014թ.-ին զոհերի քանակը հասավ ամենաբարձր կետին⁷:

Մարդու իրավունքների միջազգային նորմերի եւ հումանիտար իրավունքի խախտումներ

2. Տեղահանությունից եւ զոհերի թվից բացի քաղաքացիական բնակչության կյանքի վրա լրջորեն ազդում են մարդու իրավունքների եւ հումանիտար իրավունքի համատարած բնույթ կրող խախտումները: Փաստաթղթային ապացույցներ կան այն մասին, որ հակամարտության կողմերը խախտում են միջազգային հումանիտար իրավունքը, ինչպես նաեւ կոպիտ խախտումներ են կատարում մարդու իրավունքների միջազգային նորմերում: Քաղաքացիական բնակչության վրա ԻՇԻՊ-ի եւ դրա հետ համագործակցող զինված խմբավորումների պարբերաբար եւ համատարած հարձակումները կարող են համարվել ռազմական հանցագործություններ եւ հանցագործություններ ընդդեմ մարդկության: Ինչպես հաղորդվում է, Իրաքի անվտանգության ուժերը եւ դրանց հետ համագործակցող այլ ուժերը ռազմական գործողություններ են իրականացրել խախտելով ինչպես ընտրողականության եւ համաչափության սկզբունքները, այնպես էլ բռնության հետեւանքներից քաղաքացիական բնակչության պաշտպանությանն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու պարտավորությունը, որը կարող է հավասարազոր համարվել ռազմական հանցագործությանը: Բացի այդ, ինչպես հաղորդվում է, Իրաքի անվտանգության ուժերի հետ համագործակցող այլ զինված ուժեր իրականացրել են առեւանգումներ եւ նպատակային սպանություններ:⁸

3. Ինչպես հաղորդվում է, ԻՇԻՊ-ը եւ դրա հետ համագործակցող զինված խմբավորումները կատարել են մարդու իրավունքների «ակնհայտ, պարբերաբար եւ համատարած բնույթ կրող» կոպիտ խախտումներ, այդ թվում՝ *ուղղակիորեն քաղաքացիական բնակչության եւ քաղաքացիական ենթակառուցվածքի դեմ ուղղված հարձակումները, մահապատիժները եւ քաղաքացիական անձանց միտումնավոր սպանությունները, բռնաբարությունները, առեւանգումները եւ կանանց ու երեխաների նկատմամբ սեռական եւ ֆիզիկական բռնության այլ տեսակները, երեխաների հարկադիր հավաքագրումը, կրոնական կամ մշակութային նշանակություն ունեցող վայրերի ոչնչացումը կամ սրբապղծումը, սեփականության կամայական ոչնչացումը կամ կողոպուտը եւ հիմնարար ազատությունների անտեսումը*:⁹ Տվյալ իրավիճակը հատկապես որպես ծանր է բնորոշվում կրոնական կամ էթնիկ փոքրամասնությունների անդամների, այդ թվում քրիստոնյաների, եզդիների, թուրքմենների, շաբաքների, կակաիների, սաբիան-մանդեանների եւ շիաների համար, քանի որ ԻՇԻՊ-ը եւ դրա հետ համագործակցող զինված խմբավորումները *«միտումնավոր եւ պարբերաբար կոպտորեն խախտել են վերոնշյալ համայնքների իրավունքները՝ երբեմն դիտավորյալ վերացնելով, ճնշելով դրանց անդամներին կամ «մաքրելով» իրենց վերահսկողության ներքո գտնվող տարածքները բնակչության վերոնշյալ խմբերից*:¹⁰

⁵ Տե՛ս, օրինակ, ԿՆՄԿ, *Սիրիա եւ Իրաք. ԿՆՄԿ-ն կոչ է անում խստորեն պահպանել հումանիտար իրավունքի նորմերը*, 26 սեպտեմբեր, տե՛ս հետեւյալ հղումով՝ <https://www.icrc.org/en/document/syria-and-iraq-icrc-calls-better-compliance-humanitarian-law>; Իրաքում ՄԱԿ-ի աջակցության առաքելություն/Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ (ՄԻԳՀԳ), *Զեկույց Իրաքում ոչ միջազգային բնույթ կրող զինված հակամարտության ընթացքում քաղաքացիական բնակչության պաշտպանության վերաբերյալ, 5 հունիս-5 հուլիս 2014թ.*, 18 հուլիս 2014թ., <http://www.refworld.org/docid/53ce0f0d4.html>:

⁶ Հակամարտություն (բռնություն, բախումներ, լարվածություն) երկու կամ ավելի աղանդների (աղանդավորական խմբերի) միջեւ:
⁷ Տե՛ս «Իրաքում զոհերի թիվը» ծրագիրը, տվյալների գնահատումը՝ 22 հոկտեմբեր 2014թ., տե՛ս հետեւյալ հղումով՝ <https://www.iraqbodycount.org/database/>

⁸ Տե՛ս Իրաքում ՄԱԿ-ի աջակցության առաքելության, ՄԱԿ ԱԳՀԳ, “Human Right Watch” 24-ի եւ այլոց կողմից ներկայացված զեկույցների շարքը՝ Իրաքում զինված հակամարտության ընթացքում քաղաքացիական բնակչության պաշտպանության վերաբերյալ:

⁹ Իրաքում ՄԱԿ-ի աջակցության առաքելություն/ՄԻԳՀԳ, *Զեկույց Իրաքում զինված հակամարտության ընթացքում քաղաքացիական բնակչության պաշտպանության վերաբերյալ; 6 հուլիս-10 սեպտեմբեր 2014թ.*, 2 հոկտեմբեր 2014թ., կ. i, <http://www.refworld.org/docid/542d3eb64.html>:

¹⁰ Տե՛ս նույն տեղում: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի տեղակալ Ֆլավիա Պանսիեր *«Այս անմարդկային եւ սարսափելի խախտումները լուրջ եւ միտումնավոր հարձակումներ են համարվում մարդկային արժանապատվության եւ մարդու իրավունքների վրա, որը կարելի է համարել հանցագործություն ընդդեմ մարդկության»*: ՄԳՀԳ, *Մարդու իրավունքների խորհուրդը հատուկ նիստ է հրավիրում Իրաքում ԻԼԻՊի կողմից կատարված խախտումների վերաբերյալ*, 2 սեպտեմբեր 2014թ., տե՛ս հետեւյալ հղումով՝ <http://shar.es/11hzuk>: ՄԱԿ-ի

4. Ինչպես հաղորդվում է, ԻՇԻՊ-ի կողմից Իրաքի եւ Քրդական անվտանգության ուժերի դեմ ռազմական գործողություններն իրականացվել են՝ առանց հաշվի առնելու նման գործողությունների հետեւանքները քաղաքացիական բնակչության համար: Ավելին, հաղորդվում է, որ նպատակ ունենալով սպանել հնարավորինս շատ քաղաքացիական անձանց՝ խմբավորումը բազմիցս եւ միտումնավոր հարձակումներ է իրականացրել քաղաքացիական բնակչության կամ քաղաքացիական ենթակառուցվածքի վրա, այդ թվում հարձակումներ մահապարտների կողմից եւ ավտոմեքենաների պայթեցումներ:¹¹ ԻՇԻՊ խմբավորումը նաեւ պատասխանատվություն է կրում համայնքների, քաղաքական եւ կրոնական առաջնորդների, կառավարության աշխատակիցների, ոստիկանների եւ այլ ոլորտների մասնագետների նպատակային սպանությունների եւ առեւանգումների համար:¹² ԻՇԻՊ-ը եւ դրա հետ համագործակցող զինված խմբավորումները նաեւ մասնակցել են վիրավոր զինվորների, ոստիկանության եւ կառավարության աշխատակիցների մահապատժին:¹³

5. ԻՇԻՊ խմբավորման կողմից Շարիաթի օրենքների որոշակի մեկնաբանության հարկադիր տարածումը իր վերահսկողության ներքո գտնվող տարածքներում լուրջ մտահոգություններ է առաջացնում կանանց, կրոնական փոքրամասնությունների անդամների եւ այն անձանց իրավունքների վերաբերյալ, որոնք չեն համապատասխանում Մահմեդականության իրենց խիստ

Մարդու իրավունքների նախկին գերագույն հանձնակատար Նեյվի Փիլլայ՝ «ԻԼԻՊ-ը պարբերաբար եւ նպատակային հարձակումներ է գործում տղամարդկանց, կանանց եւ երեխաների վրա՝ նրանց էթնիկ, կրոնական պատկանելիության կամ աղանդավորական խմբի անդամ լինելու պատճառով, նաեւ դաժանաբար համատարած էթնիկ եւ կրոնական գտումներ է իրականացնում իր վերահսկողության ներքո գտնվող տարածքներում»: ՄԱԿ-ի Նորությունների կենտրոն, Իրաքի քաղաքացիական բնակչությունը «սարսափելի» հետապնդումների, էթնիկ գտումների գոհ՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատար, 25 օգոստոս 2014թ., <http://www.refworld.org/docid/53fc7eb94.html>: Տե՛ս նաեւ Միջազգային համաներում, Պատմական մասշտաբ ունեցող էթնիկ գտում, Բալամական պետությունը պարբերաբար հարձակումներ է գործում Հյուսիսային Իրաքում փոքրամասնությունների վրա, 2 սեպտեմբեր 2014թ., MDE 14/011/2014, <http://www.refworld.org/docid/540889bc4.html>: Տե՛ս նաեւ ՄԻԳԶ, Մարդու իրավունքների խորհուրդը հատուկ նիստ է հրավիրում Իրաքում ԻԼԻՊ-ի կողմից կատարված խախտումների վերաբերյալ, 2 սեպտեմբեր 2014թ., <http://shar.es/11hzuk>; Միջազգային համաներում (ՄՇ), Պատմական մասշտաբ ունեցող էթնիկ գտում, Բալամական պետությունը պարբերաբար հարձակումներ է գործում Հյուսիսային Իրաքում փոքրամասնությունների վրա, 2 սեպտեմբեր 2014թ., MDE 14/011/2014, <http://www.refworld.org/docid/540889bc4.html>: Իրաքում ՄԱԿ-ի աջակցության առաքելություն/Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ (ՄԻԳԶԳ), Ձեկույց Իրաքում ոչ միջազգային բնույթ կրող զինված հակամարտության ընթացքում քաղաքացիական բնակչության պաշտպանության վերաբերյալ, 5 հունիս-5հուլիս 2014թ., 18 հուլիս 2014թ., http://www.ohchr.org/Documents/Countries/IO/UNAMI_OHCHR_POC_Report_FINAL_18July2014A.pdf; ՄՇ, Հյուսիսային Իրաք, Խաղաղ բնակչությունը դժվարին իրավիճակում, 14 հուլիս 2014թ., <http://www.refworld.org/docid/53c4e1c84.html>; "Human Rights Watch" (HRW) ՀԳ, Իրաք. ԻՇԻՊ խմբավորումը առեւանգում, սպանում եւ վտարում է փոքրամասնություններին, 19 հուլիս 2014թ., <http://www.refworld.org/docid/53cf79964.html>; HRW, Իրաք. Բացահայտվել է ԻՇԻՊ խմբավորման մահապատժներ իրականացնելու վայրը, 27 հունիս 2014թ., <http://www.refworld.org/docid/53ced8b4.html>:

¹¹ «Իրենց ռազմական գործողությունների ընթացքում ԻԼԻՊ-ը եւ դրա հետ համագործակցող զինված խմբավորումները ոչ մի կերպ չեն փորձել պաշտպանել քաղաքացիական բնակչությանը կամ քաղաքացիական ենթակառուցվածքը, իսկ երբեմն նման գործողություններ միտումնավոր են իրականացրել քաղաքացիական բնակչությանը եւ քաղաքացիական ենթակառուցվածքին վնաս պատճառելու նպատակով»: Իրաքում ՄԱԿ-ի աջակցության առաքելություն/Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ (ՄԻԳԶԳ), Ձեկույց Իրաքում զինված հակամարտության ընթացքում քաղաքացիական բնակչության պաշտպանության վերաբերյալ, 6 հուլիս – 10 սեպտեմբեր 2014թ., 2 հոկտեմբեր 2014թ., կ. 8, <http://www.refworld.org/docid/542d3eb64.html>:

¹² «ԻԼԻՊ-ը եւ դրա հետ համագործակցող զինված խմբավորումները նաեւ շարունակել են պարբերաբար սպանություններ եւ առեւանգումներ իրականացնել, այդ թվում համայնքների, քաղաքական եւ կրոնական առաջնորդների, կառավարության աշխատակիցների, կրթության ոլորտի մասնագետների, լրագրողների եւ բուժաշխատողների սպանությունները եւ առեւանգումները»: Իրաքում ՄԱԿ-ի աջակցության առաքելություն/Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ (ՄԻԳԶԳ), Ձեկույց Իրաքում զինված հակամարտության ընթացքում քաղաքացիական բնակչության պաշտպանության վերաբերյալ, 6 հուլիս – 10 սեպտեմբեր 2014թ., 2 հոկտեմբեր 2014թ., կ. 8, 1, <http://www.refworld.org/docid/542d3eb64.html>: Տե՛ս օրինակ, BBC, Բալամական պետության զինյալները Հյուսիսային Իրաքում սպանում են երկու իրաքցի լրագրողների, 14 հոկտեմբեր 2014թ., <http://bbc.in/1Db75QS>; Յրանսպրես գործակալություն, ԻՊ զինյալները մահապատժ են ենթարկում չորս կանանց, 11 հոկտեմբեր 2014թ., <http://bit.ly/1r7KGeX>; ՄԱԿ Նորությունների կենտրոն, ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարը դատապարտում է ԻԼԻՊ-ի կողմից Իրաքում չորս կին քաղաքական գործիչների «դաժան» սպանությունը, 25 սեպտեմբեր 2014թ., <http://bit.ly/1CjGVsN>; Washington Post թերթ, Մոսկուում ջոկատը գնդակահարել է մարդու իրավունքների հարցերով կին իրավաբանի, 25 սեպտեմբեր 2014թ., <http://wapo.st/1wMVnsk>:

¹³ Հաղորդվում է, որ Իրաքում ՄԱԿ-ի աջակցության առաքելություն/Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի կողմից լուրջ դեպք է արձանագրվել այն մասին, որ Քեմիի Սիեյխեր նախկին ռազմաբազայից (Մալաի Ալ-Դին) 1.500 զինվոր եւ անվտանգության ուժերի աշխատակիցներ գերեվարվել են մահապատժի են ենթարկվել մոտավորապես 2014թ. հունիսի 12-ին: Սպանությունների համար պատասխանատվություն է ստանձնել ԻՇԻՊ խմբավորումը: Իրաքում ՄԱԿ-ի աջակցության առաքելություն/Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ (ՄԻԳԶԳ), Ձեկույց Իրաքում զինված հակամարտության ընթացքում քաղաքացիական բնակչության պաշտպանության վերաբերյալ, 6 հուլիս – 10 սեպտեմբեր 2014թ., 2 հոկտեմբեր 2014թ., կ. 5, 6, <http://www.refworld.org/docid/542d3eb64.html>: Տե՛ս նաեւ ՄԱԿ Իրաք, ՄԱԿ դեսպանորդը կոչ է անում հետաքննել Քեմիի Սիեյխերում տեղի ունեցած վայրագ սպանությունները, 3 սեպտեմբեր 2014թ., <http://bit.ly/1uB4PzJ>; HRW, Իրաք. Բալամական պետության կողմից Տիկրիտում իրականացված մահապատժներ; 2 սեպտեմբեր 2014թ., <http://www.refworld.org/docid/540991ea4.html>:

մեկնաբանությանը:¹⁴ Բացի այդ հաղորդվում է, որ անձանց, որոնք դիմադրում են կամ ենթադրվում է, որ դիմադրում են ԻՇԻՊ խմբավորմանը, եւ/կամ ենթադրվում է, որ համագործակցում են Իրաքի կամ Քրդական անվտանգության ուժերի հետ, միտումնավոր սպանում են, առեւանգում կամ կամայականորեն ոչնչացնում են նրանց սեփականությունը:¹⁵

6. Ձեկույցներում նաեւ նկարագրվում են ԻՇԻՊ խմբավորման կողմից կանանց, դեռահաս աղջիկների եւ տղաների նկատմամբ իրականացված սեռական բռնության դաժան դեպքերը: ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի հակամարտությունների ընթացքում սեռական բռնության հարցերով հատուկ ներկայացուցիչ Ջայնաթ Հավա Բանգուրան եւ Իրաքում Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Նիկոլայ Մլադենովը խստագույնս դատապարտել են ԻՇԻՊ խմբավորման կողմից իր վերահսկողության ներքո գտնվող տարածքներում փոքրամասնությունների անդամների նկատմամբ կիրառված «բարբարոսական» սեռական բռնությունը եւ «դաժան բռնաբարությունները»:¹⁶ Նաեւ հաղորդվում է ԻՇԻՊ-ի եւ դրա հետ համագործակցող խմբավորումների կողմից Իրաքի ներսում եւ սահմաններից դուրս իրականացվող մարդկանց թրաֆիքինգի, ինչպես նաեւ կանանց, մասնավորապես փոքրամասնությունների ներկայացուցիչների առեւանգման դեպքերի մասին:¹⁷

7. 2014թ. սեպտեմբերի 1-ին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդը բանաձեւ ընդունեց՝ կոչ անելով ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարին հատուկ թիմ ուղարկել Իրաք՝ հետաքննելու ԻՇԻՊ-ի եւ դրա հետ համագործակցող զինված խմբավորումների կողմից կատարված մարդու միջազգային իրավունքի նորմերի ենթադրյալ խախտումները եւ հանցագործությունները:¹⁸

8. Իրաքում ՄԱԿ-ի աջակցության առաքելությունը, Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակը եւ մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունները նաեւ արձանագրել են Իրաքի անվտանգության ուժերի եւ դրանց հետ համագործակցող այլ խմբավորումների կողմից կատարված ռազմական հանցագործություններ եւ մարդու իրավունքների խախտումներ. մասնավորապես սունիթական բանտարկյալներին առանց դատավարության մահապատժի ենթարկելը՝ ի պատասխան ԻՇԻՊ խմբավորման ռազմական հաջողությունների,¹⁹ ինչպես նաեւ անվտանգության ուժերի եւ դրանց հետ

¹⁴ Իրաքում ՄԱԿ-ի աջակցության առաքելություն/Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ (ՄԻԳԶԳ), *Ձեկույց Իրաքում զինված հակամարտության ընթացքում քաղաքացիական բնակչության պաշտպանության վերաբերյալ, 6 հունիս - 10 սեպտեմբեր 2014թ.*, 2 հոկտեմբեր 2014թ., կկ. 6, 10, 11-17, տե՛ս հետևյալ հղումով՝ <http://www.refworld.org/docid/542d3eb64.html>: Իրաքում ՄԱԿ-ի աջակցության առաքելություն/Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ (ՄԻԳԶԳ), *Ձեկույց Իրաքում ոչ միջազգային բնույթ կրող զինված հակամարտության ընթացքում քաղաքացիական բնակչության պաշտպանության վերաբերյալ, 5 հունիս - 5 հունիս 2014թ.*, 18 հունիս 2014թ., կկ. 13-14, 18, 20-21, տե՛ս հետևյալ հղումով՝ <http://www.refworld.org/docid/53ce0fd4.html>:

¹⁵ Իրաքում ՄԱԿ-ի աջակցության առաքելություն/Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ (ՄԻԳԶԳ), *Ձեկույց Իրաքում զինված հակամարտության ընթացքում քաղաքացիական բնակչության պաշտպանության վերաբերյալ, 6 հունիս - 10 սեպտեմբեր 2014թ.*, 2 հոկտեմբեր 2014թ., կկ. 5-9, 11, տե՛ս հետևյալ հղումով՝ <http://www.refworld.org/docid/542d3eb64.html>: ՄԻԳԶԳ, *Մամուլի ասուլիսի նշումներ Իրաքի եւ Բահրեյնի վերաբերյալ, 5 սեպտեմբեր 2014թ.*, <http://shar.es/11ALjh>: Տե՛ս նաեւ Ռեյտեր/Reuters/գործակալություն, *Բալանական պետությունը Հյուսիսային Իրաքում մահապատժի է ենթարկում 8 սունիթների*, 14 սեպտեմբեր 2014թ., <http://reut.rs/1IRcR4H>: NBC նորություններ, *Հյուսիսային Իրաքում քրիստոնյաները հետապնդումների պատճառով փախուստի են դիմում ԻՇԻՊ-ի ուժերից*, 10 սեպտեմբեր 2014թ., <http://nbcnews.to/1KVV2rz>:

¹⁶ ՄԱԿ Նորությունների կենտրոն, *Իրաքում ԻՊ զինյալների կողմից կատարված սեռական բռնության «վայրագ» դեպքեր*, ՄԱԿ, 13 օգոստոս 2014թ., տե՛ս հետևյալ հղումով՝ <http://www.refworld.org/docid/53f1bba24.html>:

¹⁷ HRW, *Իրաք. Հարկադիր ամուսնություն. եզդիների դավանափոխություն*, 12 հոկտեմբեր 2014թ., <http://www.hrw.org/news/2014/10/11/iraq-forced-marriage-conversion-yezidis>: Իրաքում ՄԱԿ-ի աջակցության առաքելություն/Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ (ՄԻԳԶԳ), *Ձեկույց Իրաքում զինված հակամարտության ընթացքում քաղաքացիական բնակչության պաշտպանության վերաբերյալ, 6 հունիս - 10 սեպտեմբեր 2014թ.*, կկ. 15-16, <http://www.refworld.org/docid/542d3eb64.html>: AFP, *Ձհադիստները «ամուսնության համար» տասնյակ եզդի կանանց են «վաճառել»*, 30 օգոստոս 2014թ., <http://shar.es/11jhTj>: ՄԱԿ ՄԳԶԳ, *Իրաքում ներքին տեղահանությամբ պայմանավորված ճգնաժամային իրավիճակի վերաբերյալ թիվ 8 հաշվետվություն*, 16 օգոստոս 2014թ., 22 օգոստոս 2014թ., կկ. 2, 4, <http://shar.es/11zKc4>:

¹⁸ ՄԱԿ Մարդու իրավունքների խորհուրդ, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդը Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակին կոչ է անում անհապաղ առաքելություն ուղարկել Իրաք, 1 սեպտեմբեր 2014թ., <http://shar.es/11jGWx>:

¹⁹ ՄԶ, *Իրաք. Լիակատար անպատժելիություն Իրաքում. Իշխում են զինված խմբավորումները*, MDE 14/015/2014, 14 հոկտեմբեր 2014թ., <http://www.amnesty.org/en/library/info/MDE14/015/2014/en>: ՄԻԳԶԳ, Մարդու իրավունքների խորհուրդը *հատուկ նիստ է հրավիրում Իրաքում ԻԼԻՊ-ի կողմից կատարված խախտումների վերաբերյալ*, 2 սեպտեմբեր 2014թ., <http://shar.es/11h9uU>: HRW, *Բոսոր Իրիսիական բռնաբարություններ*

համագործակցող այլ խմբավորումների կողմից սունիթական քաղաքացիական անձանց առեւանգումները եւ առանց դատավարության նրանց մահապատժի ենթարկելը:²⁰ Բացի այդ, Իրաքի անվտանգության ուժերը պատասխանատու են նաեւ բնակելի տարածքներում անխնա հրետանային գնդակոծության եւ օդային ուժերի կողմից սունիթական շրջանների, այդ թվում բարելի ռումբերի կիրառման պատճառով քաղաքացիական անձանց մահվան համար:²¹

9. Հաշվետվություններում նշվում է աղանդավորական ճնշումների վերսկսումը. դրա ապացույցն են սունիթական տղամարդկանց դիերը, որոնց ձեռքերին ձեռնաշղթաներ են եղել, աչքերը կապված են եղել, եւ որոնց ակնհայտորեն մահապատժի են ենթարկել: Նրանց դիերը գտել են երկրի տարբեր հատվածներում, հատկապես՝ Բաղդադում:²² Ինչպես հաղորդել էր ՄԱԿ-ի աջակցության առաքելությունը, Բասրա նահանգում սունիթներին սպառնացել են, առեւանգել եւ սպանել:²³

10. Բռնությունը զգալի հետեւանքներ է ունեցել իրաքցի երեխաների համար: Տարվա սկզբից մոտ 700 երեխա սպանվել է կամ ծանր վիրավորվել, այդ թվում եւ առանց դատավարության իրականացվող մահապատժիների ընթացքում:²⁴ Ձեկույցներում նշվում է, որ երեխաներին

գանգվածային սպանություններ, 11 հուլիս 2014թ., <http://www.refworld.org/docid/53c4e8124.html>; ՄՀ, Իրաք. Ապացույցները վկայում են վրեժի նպատակով սունիթական կալանավորների բազմաթիվ սպանությունների մասին; 27 հունիս 2014թ., <http://www.refworld.org/docid/53b2662c4.html>.

²⁰ ՄՀ, Իրաք. Լիակատար անպատժելիություն Իրաքում, Իշխում են զինված խմբավորումները, MDE 14/015/2014, 14 հոկտեմբեր 2014թ., <http://www.amnesty.org/en/library/info/MDE14/015/2014/en>; Իրաքում ՄԱԿ-ի աջակցության առաքելություն/Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ, Ձեկույց Իրաքում զինված հակամարտության ընթացքում քաղաքացիական պաշտպանության պաշտպանության վերաբերյալ, 6 հուլիս - 10 սեպտեմբեր 2014թ., 2 հոկտեմբեր 2014թ., կվ. 19-20, <http://www.refworld.org/docid/542d3eb64.html>; HRW, Իրաք. Իշխանամետ աշխարհագրայինների մահվան հետքը, 31 հուլիս 2014թ., <http://www.refworld.org/docid/53df9ad54.html>.

²¹ Իրաքում ՄԱԿ-ի աջակցության առաքելություն/Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ, Ձեկույց Իրաքում զինված հակամարտության ընթացքում քաղաքացիական բնակչության պաշտպանության վերաբերյալ, 6 հուլիս - 10 սեպտեմբեր 2014թ., կվ. 18-19, <http://www.refworld.org/docid/542d3eb64.html>; HRW, Իրաք. Փրկվածները նկարագրում են կառավարական ուժերի կողմից հասցված օդային հարվածները, 14 սեպտեմբեր 2014, <http://www.refworld.org/docid/5416d1de4.html>; ՄԻԳԶ, Մարդու իրավունքների խորհուրդը հատուկ նիստ է հրավիրում Իրաքում ԲԼԻՊ-ի կողմից կատարված խախտումների վերաբերյալ, 2 սեպտեմբեր 2014թ., <http://shar.es/11h9uU>; HRW, Իրաք. Կառավարական ուժերի կողմից հասցված օդային հարվածների քաղաքացիական զոհերը, 23 հուլիս 2014թ., <http://www.refworld.org/docid/53d211344.html>; ՄՀ, Հյուսիսային Իրաք. Խաղաղ բնակչությունը՝ դժվարին իրավիճակում, 14 հուլիս 2014թ., MDE 14/007/2014, <http://www.refworld.org/docid/53c4e1c84.html>; Իրաքում ՄԱԿ-ի աջակցության առաքելություն/Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ, Ձեկույց Իրաքում ոչ միջազգային բնույթ կրող զինված հակամարտության ընթացքում քաղաքացիական բնակչության պաշտպանության վերաբերյալ, 5 հունիս - 5 հուլիս 2014թ., 18 հուլիս 2014թ., կվ. 14-15, <http://www.refworld.org/docid/53c0f0d4.html>; HRW, Իրաք. Կառավարական ուժերը ուժեղացրել են Ֆալուջա քաղաքում գտնվող հիվանդանոցը, 27 մայիս 2014թ., <http://www.refworld.org/docid/538d99144.html>.

²² «Երկրի տարբեր հատվածներում արձանագրվել են մեծ թվով սպանությունների եւ մահվան դեպքեր: Մասնավորապես Բաղդադի նահանգում ամեն օր գտնում էին ինքնուրույն ջրացահայտված բազմաթիվ անձանց դիակներ: Ձոհերից շատերին գտել են գնդակահարված՝ ձեռքերը կապված մեջքի հետեւում, մինչդեռ բազմաթիվ նշաններ կային, որոնք վկայում էին անձի մահվանից առաջ խոշտանգումների ենթարկվելու մասին: Նման դեպքերի մեծ մասը աղանդավորական բնույթ են կրում»: Իրաքում ՄԱԿ-ի աջակցության առաքելություն/Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ, Ձեկույց Իրաքում զինված հակամարտության ընթացքում քաղաքացիական բնակչության պաշտպանության վերաբերյալ, 6 հուլիս - 10 սեպտեմբեր 2014թ., 2 հոկտեմբեր 2014թ., կվ. 21-22, <http://www.refworld.org/docid/542d3eb64.html>; Տե՛ս նաեւ NPR ռադիոկայան, Բաղդադում ավելանում են աղանդավորական բռնության ենթարկվելու մտավախությունները, 6 սեպտեմբեր 2014թ., <http://n.pr/1nAOAYm>; HRW, Իրաք. Իշխանամետ աշխարհագրայինների մահվան հետքը, 31 հուլիս 2014թ., <http://www.refworld.org/docid/53df9ad54.html>; Ռեյտեր/Reuters գործակալություն, Իրաքի անվտանգության ուժերը Բաղդադի հարավում 53 դի են գտել, 9 հուլիս 2014թ., <http://yhoo.it/1pldqO5>; UPI տեղեկատվական գործակալություն, Իրաքում մահապատժի հիշեցնող սպանությունները «վերակենդանացնում են» քաղաքացիական պատերազմի սարսափները, 12 փետրվարի 2014թ., <http://upi.com/2667631>; Ռեյտեր/Reuters գործակալություն, Իրաքում աճում է մահապատժի հիշեցնող սպանությունների թիվը, 27 նոյեմբեր 2013թ., <http://reut.rs/18nVRcV>.

²³ Իրաքում ՄԱԿ-ի աջակցության առաքելության Մարդու իրավունքների բաժնի ղեկավար Ֆրանչեսկո Մոտտի՝ «2014թ. հունիսի 23-ից սկսած ամսվա ընթացքում 19 սունիթական քաղաքացիական անձինք են սպանվել եւ եւս 19 անձինք սպանվել են նպատակային սպանությունների եւ առեւանգումների ժամանակ: Դեպքերից շատերի մասին ՉԼՄ-ներում չի հաղորդվել, բայց դրանցից յուրաքանչյուրը տարբեր աղբյուրների միջոցով ստուգվել է հաստատվել է Իրաքում ՄԱԿ-ի աջակցության առաքելության կողմից: Յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ տեղական համայնքի ներկայացուցիչները կարծիք հայտնեցին, որ վերոնշյալ դեպքերի հիմնական պատճառը եղել է զոհերի դավանանքը: Իշխանությունները մեղավորներին որակեցին որպես «անհայտ զինված անձինք» եւ որեւէ դեպքի կապակցությամբ ոչ մեկ չձեռքարկվեց: ՄԱԿ-ի ներկայացուցիչը Իրաքում, ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Միդլենդը նախագոյացնում է Բասրայի նահանգում սունիթական փոքրամասնությունների վրա մեծ թվով հարձակումների մասին, 20 օգոստոս 2014թ., <http://bit.ly/1qOP7gt>; Տե՛ս նաեւ Իրաքում ՄԱԿ-ի աջակցության առաքելություն/Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ, Ձեկույց Իրաքում զինված հակամարտության ընթացքում քաղաքացիական բնակչության պաշտպանության վերաբերյալ, 6 հուլիս - 10 սեպտեմբեր 2014թ., 2 հոկտեմբեր 2014թ., կ. 24, <http://www.refworld.org/docid/542d3eb64.html>; Պատերազմի հետ կապված հարցերի ուսումնասիրության ինստիտուտ, Հարավային Իրաքում սունիթական զինվորների առաջնորդների վրա հարձակումների թվի աճը, Լրացում #40, 27 նոյեմբեր 2013թ., <http://bit.ly/1qOPacm>; AI-Monitor, Աղանդավորական պատճառներով պայմանավորված տեղահանություն Հարավային Իրաքում, 23 սեպտեմբեր 2013թ., <http://almon.co/fze>; Associated Press գործակալություն, Իրաքի սունիթները պատում են քաղաքի հարավային հատվածում աղանդավորական խմբերի վրա հարձակումների մասին, 17 սեպտեմբեր 2013թ., <http://yhoo.it/1tthXaF>.

²⁴ Երեխաների դրության եւ զինված հակամարտության հարցերով ՄԱԿ Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցչի գրասենյակ, Անվտանգության խորհրդի քննարկման համար ներկայացված հայտարարություն, 8 սեպտեմբեր 2014թ., <http://shar.es/1a0JxY>.

հավաքագրվելու վտանգ է սպառնում՝ հակամարտության մեջ ներգրավված բոլոր կողմերի զինված խմբավորումների կողմից, այդ թվում՝ այն խմբավորումների, որոնց կառավարությունն աջակցություն է ցուցաբերում, ինչպես նաև այն խմբավորումների կողմից, որոնք պայքարում են ԻՇԻՊ-ի եւ դրա հետ համագործակցող զինված խմբավորումների հետ միասին:²⁵ Ինչպես հաղորդվում է, ԻՇԻՊ խմբավորումն օգտագործում է երեխաներին՝ որպես մահապարտ-ահաբեկիչների:²⁶

Տեղահանություն եւ գոհեր քաղաքացիական բնակչության շրջանում

11. 2014թ. սկզբին մինչ ներկայիս ճգնաժամը Իրաքում գրանցվել էր երկրի ներսում տեղահանության աշխարհի ամենաբարձր ցուցանիշներից մեկը՝ 1.3 մլն մարդ: 2014թ. ԻՇԻՊ-ի եւ դրա հետ համագործակցող զինված խմբավորումների ռազմական հաջողությունները եւ որպես դրանց հետեւանք՝ ռազմական գործողությունները եւ մարդու իրավունքների զանգվածային խախտումները հանգեցրեցին լայնամասշտաբ տեղահանությունների:²⁷ 2014թ. հունվարից մինչեւ հոկտեմբերի սկիզբն ընկած ժամանակահատվածում ավելի քան 1,8 մլն մարդ, որոնց գրեթե կեսը երեխաներ էին, տեղահանվել են հիմնականում Նայնավա, Դիյալա, Բադդադ, Քիրքուք եւ Բաբիլ նահանգներից Իրաքի 1850 տարբեր շրջաններ:²⁸ Միայն 2014թ. օգոստոսին հիմնականում Նայնավայից ավելի քան 720,000 մարդ է տեղահանվել: Ներքին տեղահանված անձանց մեծ մասը (ՆՏԱ) փախուստի է դիմել Իրաքի հյուսիսային շրջաններ, այդ թվում՝ Իրաքի Քուրդիստան եւ Նայնավայի այլ շրջաններ կամ տեղահանվել Ալ-Անբարի այլ հատվածներ: Ներկայումս Իրաքի Քուրդիստանում բնակվում են ավելի քան 850,000 ՆՏԱ,²⁹ որոնց մեծ մասը (մոտ 550,000)

²⁵ Իրաքում ՄԱԿ-ի աջակցության առաքելություն/Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ, *Ջեկույց Իրաքում զինված հակամարտության ընթացքում քաղաքացիական բնակչության պաշտպանության վերաբերյալ, 6 հուլիս - 10 սեպտեմբեր 2014թ.*, 2 հոկտեմբեր 2014թ., կկ. 17-18, <http://www.refworld.org/docid/542d3eb64.html>: ՄԱԿ Նորությունների գործակալություն, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդ «Իրաքում՝ «անհավանական մասշտաբով» կատարված հատկապես ծանր հանցագործություններ», սեպտեմբեր 2014թ., <http://www.refworld.org/docid/5405bb8b4.html>: Իրաքում ՄԱԿ-ի աջակցության առաքելություն/Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ, *Ջեկույց Իրաքում ոչ միջազգային բնույթ կրող զինված հակամարտության ընթացքում քաղաքացիական բնակչության պաշտպանության վերաբերյալ; 5 հունիս - 5 հուլիս 2014թ.*, 18 հուլիս 2014թ., կ. 20, <http://www.refworld.org/docid/53ce0f0d4.htm>

²⁶ Երեխաների դրության եւ զինված հակամարտության հարցերով ՄԱԿ Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցչի գրասենյակ, *Անվտանգության խորհրդի՝ քննարկման համար ներկայացված հայտարարություն, 8 սեպտեմբեր 2014թ.*, <http://shar.es/1a0JxY>

²⁷ 2014թ. հունվարից մինչեւ օգոստոս ընկած ժամանակահատվածում կարելի էջել տեղահանության երեք հիմնական ալիք: Տեղահանության առաջին ալիքն արձանագրվել է 2013թ. դեկտեմբերի վերջից մինչեւ 2014թ. հունվարն ընկած ժամանակահատվածում Ալ-Անբար նահանգի արևելյան հատվածում՝ քաղաքներում լայնամասշտաբ ռազմական գործողություններից եւ ուժերի լուծարումներից հետո: Տեղահանության երկրորդ ալիքը տեղի է ունեցել 2014թ. հունիսի 6-ից հետո, երբ ԻՊ-ն եւ դրա հետ համագործակցող զինված խմբավորումները հարձակվեցին երկրի մեծությամբ երկրորդ քաղաքի՝ Մոսուլի վրա: Հաջորդ մի քանի օրվա ընթացքում ավելի քան 450,000 մարդ կամ բնակչության գրեթե քառորդ մասը, ներառյալ կրոնական եւ էթնիկ փոքրամասնությունների շատ անդամներ լքեցին քաղաքը: Տեղահանության վերջին ալիքը սկսվեց օգոստոսի 3-ին ԻՊ-ի եւ դրա հետ համագործակցող զինված խմբավորումների կողմից Սինջար (Նայնավա) քաղաքը գրավելուց հետո, որը հանգեցրեց 300,000 մարդկանց, մասնավորապես եզդիների տեղահանությանը, որոնցից շատերը Սինջար լեռն անցնելով փախուստի դիմեցին Սիրիա եւ Իրաքի Քուրդիստան: ՄԱԿ ՄԳՀԳ, *Ակնարկ հումանիտար կարիքների վերաբերյալ, 26 սեպտեմբեր 2014թ.*, կ. 5, <http://bit.ly/1xoOfCD>: Ակնկալվում է տեղահանության չորրորդ ալիքը, քանի որ 180,000 մարդ տեղահանվել է՝ 2014թ. հոկտեմբերի սկզբին ԻՊ-ի եւ դրա հետ համագործակցող խմբավորումների կողմից Հիթ քաղաքում եւ շրջակա տարածքներում (Ալ-Անբար) իրենց վերահսկողությունը հաստատելու պատճառով: Ինչպես հաղորդվում է, նոր տեղահանված անձանցից շատերը Ալ-Անբարի այլ հատվածներին նախկինում ներքին տեղահանված անձինք են: ՄԱԿ ՓԳՀ, *Տեղահանությամբ պայմանավորված ճգնաժամն Իրաքում վատթարանում է, քանի որ խաղաղ բնակչությունը փախուստի է դիմում ԻՇԻՊ-ի կողմից կատարված վերջին ռազմական գործողության պատճառով, 14 հոկտեմբեր 2014թ.*, <http://www.unhcr.org/543d10119.html>: Սույն փաստաթղթի ստեղծման պահին հաստատվել է Հիթից 40,000 մարդկանց տեղահանության մասին տեղեկատվությունը, չնայած տեղահանված անձանց ընդհանուր թիվը դժվար է գնահատել տվյալ տարածք մուտք գործելու սահմանափակումների պատճառով: ՄԱԿ ՄԳՀԳ, *Իրաքում ներքին տեղահանությամբ պայմանավորված ճգնաժամային իրավիճակի վերաբերյալ թիվ 16 հաշվետվություն, 11 - 17 հոկտեմբեր 2014թ.*, կ. 1, տե՛ս հետևյալ հղումով՝ <http://shar.es/1mQFiG>:

²⁸ Այս տվյալներում ներառված չէ ամենավերջին տեղահանությունը Ալ-Անբար նահանգի Հիթ քաղաքից: Պլանավորման նպատակներով Երկրի հումանիտար թիւրը (HCT) կիրառում է 1,8 մլն տվյալը: ՄԱԿ, *Տեղահանված անձանց տեղաշարժերին հետևելու ծրագիր*, VII շրջան, թիվ 1 հաշվետվություն, 20 հոկտեմբեր 2014թ., կ. 1, <http://shar.es/1mODKJ>:

²⁹ Սույն տվյալները ներառում են մերձսահմանային շրջանների վիճելի տարածքները, որոնց աջակցություն է ցուցաբերվում Քուրդիստանի տարածաշրջանային կառավարության կողմից, դրանք են *Ալրա* եւ *Ալ-Շիկան* քաղաքները Նայնավա նահանգում եւ *Քիթրի* եւ *Խանաքին* քաղաքները Դիյալա նահանգում: ՄԱԿ, *Տեղահանված անձանց տեղաշարժերին հետևելու ծրագիր*, VII շրջան, թիվ 1 հաշվետվություն, 20 հոկտեմբեր 2014թ., կ. 3, տե՛ս հետևյալ հղումով՝ <http://shar.es/1mODKJ>: Քուրդիստանում ներքին տեղահանությամբ պայմանավորված ճգնաժամի հաղթահարման համար նախատեսված Անհապարհ արձագանքման պլանում(IRP), որը հաստատվել է ՔՏԿ Պլանավորման նախարարության եւ ՄԱԿ-ի կողմից, ներկայացվում են հետևյալ տվյալները. 862.000 ՆՏԱ Քուրդիստանում, որոնց մեծ մասը (63%) բնակվում է Դախուկում, այնուհետև Էրբիլն է (20%) եւ Սուլեյմանիան (16%): ՔՏԿ Պլանավորման նախարարություն/ՄԱԿ, *Անհապարհ արձագանքման պլան՝ նախատեսված Իրաքի Քուրդիստանում ներքին տեղահանությամբ պայմանավորված ճգնաժամի հաղթահարման համար: 15 սեպտեմբեր - 15 նոյեմբեր 2014թ.*, 28 սեպտեմբեր 2014թ., կ. 2, <http://shar.es/1molzo>:

ապաստան են գտել Դախուկ նահանգում:³⁰ Բացի այդ, Իրաքի Քուրդիստանում բնակվում են մոտ 200,000 ՆՏԱ, որոնք երկիր են ժամանել 2003թ.-ին սկսած նախկին բռնության ժամանակ, ինչպես նաև ավելի քան 200,000 սիրիացի փախստականներ:³¹ Անձինք շարունակում են տեղահանվել Բաղդադ եւ դրա սահմաններում գտնվող այլ տարածքներ, ինչպես նաև Բաղդադից հարավ տեղակայված նահանգներ, հիմնականում Նաջաֆ, Քերքալա, Վասիտ եւ Բաքի:³² 2014թ. ներքին տեղահանված անձանց շարքում շատ են այնպիսիները, որոնք ավելի վաղ էլի են տեղահանվել Իրաքում նախկին զինված հակամարտությունների պատճառով:³³ Ինչպես հաղորդվում է, հակամարտության աշխարհագրական սահմանների փոփոխության պատճառով բազմաթիվ անձինք մի քանի անգամ են տեղահանվել,³⁴ այդ թվում՝ տեղահանությունները Նայնավա նահանգի վիճելի տարածքներում, ինչպես նաև Իրաքի Քուրդիստանի ներքին սահմանին մոտ տեղակայված ներքին տեղահանված անձանց համար նախատեսված ճամբարներից:³⁵ Քանի որ

³⁰ Ընդհանուր թիվը ներառում է ներքին տեղահանված անձանց՝ Ակրա եւ Ալ-Շիկան (Նայնավա նահանգ) եւ Քիֆրի եւ Խանաքին (Դիյալա) քաղաքների վիճելի հատվածներում, որոնց նկատմամբ հավակնություններ ունեն կենտրոնական կառավարությունը եւ Քուրդիստանի տարածաշրջանային կառավարությունը (ԲՏԿ) եւ որոնց կարգավիճակը պետք է սահմանվեր համաձայն Իրաքի 2005թ. սահմանադրության 140-րդ հոդվածի: Այս տարածքները *դե ֆակտո* գտնվում են Քուրդիստանի տարածաշրջանային կառավարության վերահսկողության ներքո (ԲՏԿ), որը նաև ծառայություններ է մատուցում եւ աջակցություն է ցուցաբերում ներքին տեղահանված անձանց: ՄՄԿ, *Տեղահանված անձանց տեղաշարժերին հետևելու ծրագիր*, VI շրջան, III հաշվետվություն, հոկտեմբեր 2014թ., կ. 3, <http://iomiraq.net/file/1270/download?token=aH5gsss0>: Վերլուծության եւ քաղաքականության պլանավորման բաժին (ՎՔՊԲ), Տեղեկություններ Դիյալա նահանգի վերաբերյալ, հոկտեմբեր 2014թ., կ. 1, <http://www.jauiraq.org/gp/print/GP-Diyala.asp>: ՎՔՊԲ, Տեղեկատվություն Նայնավա նահանգի վերաբերյալ, հոկտեմբեր 2014թ., կ. 1, տե՛ս հետևյալ հղումով՝ <http://www.jauiraq.org/gp/print/GP-Ninewa.asp>:

³¹ Սիրիացի փախստականների թիվը կաճի, քանի որ համաձայն գրանցումների Թուրքիայի եւ Քուրդիստանի միջև սահմանի վերջերս տեղի ունեցած բացումից հետո հազարավոր անձինք Կորնք քաղաքից Սիրիա են ժամանել: 2014թ. հոկտեմբերի 20-ի դրությամբ շուրջ 10.000 սիրիացիներ անցնելով Թուրքիան՝ հասել են Իրաքի Քուրդիստան: ՄԱԿ ՓԳՀ, 22 հոկտեմբեր 2014թ.: Տե՛ս նաև ՄԱԿ ՓԳՀ, *Տարածաշրջանային միջոցառումներ ուղղված փախստականներին աջակցություն տրամադրելուն-Իրաք*, թարմացվել է 30 սեպտեմբեր 2014թ., <http://data.unhcr.org/syrianrefugees/country.php?id=103>; ԲՏԿ Պլանավորման նախարարություն/ՄԱԿ, *Անհասարակ աղքատացներն պլան նախատեսված Իրաքի Քուրդիստանում ներքին տեղահանությամբ պայմանավորված ճգնաժամի հարթահարման համար*; 15 սեպտեմբեր - 15 նոյեմբեր 2014թ., 28 սեպտեմբեր 2014թ., կ. 3, <http://shar.es/1molzo>: ՄՄԿ/ Իրաքում ՄԱԿ-ի աջակցության առաքելություն/ՄԱԿ ՄԳՀԳ, *Իրաքի Քուրդիստանի (Բ-Ի) համար ծանր հետեւանքներ ունեցավ բռնության վերջերս բարձրացած ալիքը, որի արդյունքում տեղահանվեց ավելի քան 850.000 մարդ*, 30 օգոստոս 2014թ., տե՛ս հետևյալ հղումով՝ <http://bit.ly/1oUo8Nz>:

³² ՄՄԿ, *Տեղահանված անձանց տեղաշարժերին հետևելու ծրագիր*, VII շրջան, թիվ 1 հաշվետվություն, 20 հոկտեմբեր 2014թ., կ. 4, <http://shar.es/1mODKl>: Հաղորդվում է, որ ծագումով Նայնավայի հարթավայրերից եւ Տալ Աֆար տարածքից շարքերի (Շիա) եւ թուրքմենների համայնքների տասնյակ հազարավոր ներկայացուցիչներ ապաստան են փնտրում հարավային նահանգներում: REACH շրագիր, *Շիա շարք եւ թուրքմեն փոքրամասնությունների տեղահանությունը Տալ Աֆարից եւ Նայնավայի հարթավայրերից հունիս - 18 օգոստոս 2014թ.*, <http://shar.es/11jici>: Տե՛ս նաև Associated Press գործակալություն, Իրենց բնակավայրերից հեռու շիաների սուրբ քաղաքում տեղահանված իրաքիները պատրաստ են պատերազմ փոխանակել դժվարություններով լի կյանքի հետ, 14 օգոստոս 2014թ., <http://fxn.ws/1SZCwKb>:

³³ REACH ծրագիր, *Ակնարկ Իրաքում ներքին տեղահանությամբ պայմանավորված ճգնաժամի վերաբերյալ*, 3-18 օգոստոս, 2014թ., 18 օգոստոս 2014թ., ք. 4, <http://shar.es/1moZ0Y>: ՄԱԿ ՄԳՀԳ, *Իրաքում ներքին տեղահանությամբ պայմանավորված ճգնաժամային իրավիճակի վերաբերյալ թիվ 1 հաշվետվություն*, 4 հուլիս 2014թ., <http://shar.es/1moZAO>: 1970-ականներից հետո Իրաքում տեղահանության վերաբերյալ տեղեկատվությանը ծանոթանալու համար տե՛ս Ներքին տեղահանության մշտադիտարկման կենտրոն, *Իրաքում ներքին տեղահանված անձանց թվի հետ կապված տվյալների վերլուծություն*, 8 սեպտեմբեր 2014թ., <http://www.internal-displacement.org/middle-east-and-north-africa/iraq/figures-analysis/>:

³⁴ Օրինակ, մոտ 50,000 ՆՏԱ, հիմնականում քրիստոնյաներ, որոնք 2014թ. հունիսի սկզբին Մոսուլ քաղաքից տեղահանվել էին Նայնավայի հարթավայրերում տեղակայված գյուղեր եւ այլ քաղաքներ, եւս մեկ անգամ տեղահանվեցին, երբ օգոստոսի սկզբին ԻՊԽ խմբավորման ուժերը գրավեցին այդ տարածքները: REACH ծրագիր, *Քրիստոնյա համայնքների տեղահանությունը Նայնավայի հարթավայրերից 3 - 7 օգոստոս 2014թ.*, 7 օգոստոս 2014թ., տե՛ս հետևյալ հղումով՝ <http://shar.es/11jCUE>: Լույս կերպ Մոսուլ եւ Տալ Աֆար քաղաքներից բազմաթիվ շարքեր եւ թուրքմեններ բազմիցս տեղահանվել են, քանի որ ԻՊԽ-ն եւ դրա հետ համագործակցող ուժերն ամրապնդում էին իրենց տիրապետությունը Հյուսիսային Իրաքում: REACH ծրագիր, *Շիա շարք եւ թուրքմեն փոքրամասնությունների տեղահանությունը Տալ Աֆարից եւ Նայնավայի հարթավայրերից հունիս - 18 օգոստոս 2014թ.*, 18 օգոստոս 2014թ., <http://shar.es/11jici>: Տե՛ս նաև ՄԱԿ ՓԳՀ, *Տեղահանությամբ պայմանավորված ճգնաժամային Իրաքում վատթարանում է, քանի որ խաղաղ բնակչությունը փախուստի է դիմում ԻՐԻԴ-ի կողմից կատարված վերջին ռազմական գործողության պատճառով*, 14 հոկտեմբեր 2014թ., <http://www.unhcr.org/543d10119.html>: REACH ծրագիր, *Ակնարկ Իրաքում ներքին տեղահանությամբ պայմանավորված ճգնաժամի վերաբերյալ*, 3 - 18 օգոստոս 2014թ., 18 օգոստոս 2014թ., կ. 1, <http://shar.es/1moZ0t>: IRIN (Տարածաշրջանային տեղեկատվական ընդհանուր ցանց), Չնայած ֆինասավորման աճին՝ Իրաքին տրամադրվող աջակցությունը «բավարար չէ», 15 օգոստոս 2014թ., տե՛ս հետևյալ հղումով՝ <http://shar.es/11jONu>:

³⁵ Խազաիր եւ Գարմավա ճամբարներում բնակվող ներքին տեղահանված անձինք ստիպված եղան կրկին փախուստի դիմել, երբ 2014թ. զինված խմբավորումները հարձակվեցին այդ տարածքների վրա: Ավելի ուշ ներքին տեղահանված անձինք նորից վերադարձան ճամբարներ, սակայն դեռեւս անվտանգություն հետ կապված մտավախություններ կան: ACAPS (Կարողությունների գնահատման) ծրագիր, *Տեղեկատվական նշում. Բռնության հումանիտար հետեւանքները Հյուսիսային եւ Կենտրոնական Իրաքում*, 4 սեպտեմբեր 2014թ., կ. 4, <http://shar.es/11j9od>: IRIN (Տարածաշրջանային տեղեկատվական ընդհանուր ցանց), Չնայած ֆինասավորման աճին՝ Իրաքին տրամադրվող աջակցությունը «բավարար չէ», 15 օգոստոս 2014թ., <http://www.refworld.org/docid/53f322794.html>: ՄԱԿ ՄԳՀԳ, *Իրաքում ներքին տեղահանությամբ պայմանավորված ճգնաժամային իրավիճակի վերաբերյալ թիվ 7 հաշվետվություն*, 9 օգոստոս - 15 օգոստոս 2014թ., 15 օգոստոս 2014, կ. 2, <http://shar.es/1moZ8c>: «New Internationalist» լրագիր, *Իրաքում տեղահանված անձինք հարկադրված են երկրորդ անգամ փախուստի դիմել զինյալների խմբից*, 11 օգոստոս 2014թ., <http://shar.es/11zRkz>: ՄԱԿ ՄԳՀԳ, *Իրաքում ներքին տեղահանությամբ պայմանավորված ճգնաժամային իրավիճակի վերաբերյալ թիվ 6 հաշվետվություն*, 2 - 8 օգոստոս 2014թ., 8 օգոստոս 2014թ., կ. 2, <http://shar.es/11zB7N>:

Իրաքի հյուսիսային եւ կենտրոնական հատվածներում ռազմական գործողությունները շարունակվում են, ակնկալվում են նոր տեղահանություններ:³⁶

12. Վերջերս տեղի ունեցած դեպքերի պատճառով իրաքցիները հարկադրված էին անվտանգություն եւ պաշտպանություն ստանալու նպատակով փախուստի դիմել տարածաշրջանի այլ հատվածներ:³⁷ Տարածաշրջանում ՄԱԿ ՓԳՀ ներկայացուցչությունները վերջին շաբաթների ընթացքում արձանագրել են նոր ժամանած իրաքցիների, ինչպես նաեւ այն անձանց գրանցումների թվի աճ, որոնք արդեն բնակվում էին երկրում, հատկապես Թուրքիայում,³⁸ Հորդանանում³⁹ եւ Սիրիայում, իսկ ավելի փոքր թվով Եգիպտոսում⁴⁰ եւ Լիբանանում:⁴¹ Ներկայումս հյուսիսարեւելյան Սիրիայում ՄԱԿ ՓԳՀ-ն աջակցություն է ցուցաբերում Իրաքից ժամանած ավելի քան 6,000 եզդի փախստականների: Տասնյակ հազարավոր մարդիկ ժամանել են օգոստոսին, քանի որ նրանք փախչում էին ԻՊ-ի կողմից Սինջարի (Նայնավա) վրա իրականացվող հարձակումներից: Փախստականները եւ հատկապես կանայք եւ երեխաները ժամանել են չափազանց հյուծված վիճակում, ծարավ եւ սոված, շատերն ունեին չմշակված վերքեր, քանի որ ստիպված էին եղել սահմանն անցնել եւ ոտքով մեծ տարածություն հաղթահարել:⁴² Եվրոպայում 2014թ. իրաքցի ապաստան հայցող անձանց դիմումների թիվն անցյալ տարվա համեմատ աճել է:⁴³

13. Նախորդ տարիների համեմատ 2014թ.-ին զոհերի թիվը կտրուկ աճել է: 2014թ. հունվարից հոկտեմբերի վերջն ընկած ժամանակահատվածում «Իրաքում զոհերի թիվը» ծրագիրն (IBC) արձանագրել է ավելի քան 13,600 քաղաքացիական անձանց մահվան դեպք. համեմատության համար կարելի է նշել, որ 2013թ. առաջին տաս ամիսների ընթացքում գրացվել է 7,800

³⁶ ՄԱԿ ՄԳՀԳ, Ակնարկ հումանիտար կարիքների վերաբերյալ, 26 սեպտեմբեր, 2014թ., կ. 5, տե՛ս հետևյալ հղումով՝ <http://bit.ly/1xoOfCD>

³⁷ ՄԱԿ ՓԳՀ, Հորդանանում եւ Թուրքիայում կտրուկ աճել է ԻՇԻՊ խմբավորման ուժերից փախուստի դիմող իրաքցի փախստականների թիվը: 23 սեպտեմբեր 2014թ., <http://www.unhcr.org/54214cfe9.html>:

³⁸ Մոտ 103,000 իրաքցի փախստականներ գրանցվելու նպատակով դիմել են Թուրքիայում ՄԱԿ ՓԳՀ-ին եւ վերջինիս հետ համագործակցող կազմակերպություններին, այդ թվում՝ 65,000 անձ դիմել է 2014թ. հունիսից, երբ ԻՊ ուժերը գրավեցին Մոսուլը եւ դրա շրջակա տարածքները: ՄԱԿ ՓԳՀ-ն տեղեկացված է ներկայումս Թուրքիայի արեւելյան հատվածում բնակվող հազարավոր այլ իրաքցիների մասին, որոնք դեռեւս չեն գրանցվել: Գրանցվելու նպատակով ՄԱԿ ՓԳՀ գործընկեր կազմակերպությանը դիմած ավելի քան 2500 իրաքցիների անհատական առանձնահատկությունների ուսումնասիրության ընթացքում նրանց գրեթե 50%-ը հայտարարել է, որ փախուստի է դիմել ԻՊ խմբավորման կողմից իրականացվող հարձակումներից, մինչդեռ 20%-ը հայտարարել է, որ փախուստի է դիմել ԻՊ խմբավորման մտավախությունից: Մյուս 20%-ը հայտարարել է, որ փախուստի է դիմել աղանդով պայմանավորված բռնությունից: Հարցազրույցի մասնակիցների գրեթե 50%-ը քրդեր էին, մինչդեռ 33%-ը՝ արաբներ:

³⁹ Ալ-Անբարում 2013թ. վերջում սկսած բռնությունը հանգեցրեց Հորդանան ժամանող իրաքցիների թվի աճին: 2014թ. հունիսին ԻՊ-ի եւ դրա հետ համագործակցող զինված խմբավորումների կողմից Մոսուլում իրենց իշխանությունը հաստատելուց հետո ժամանումների թիվը շարունակեց աճել: Մինչ 2014թ. առաջին հինգ ամիսների ընթացքում ՄԱԿ ՓԳՀ ամեն օր միջինը 30 իրաքցի էր դիմում, հունիսից այս թիվը կրկնապատկվեց եւ կազմեց 65 մարդ, իսկ օգոստոսին եւ սեպտեմբերին հասավ առավելագույնին՝ օրեկան 120 մարդ: Ներկայումս ՄԱԿ ՓԳՀ-ն Հորդանանում գրանցել է 10 600 իրաքցի փախստականների, որոնցից 1 383-ը գրանցվել են միայն օգոստոսին, որը 2007թ.-ից հետո մինչ օրս կազմում է գրանցումների ամենաբարձր ամսական ցուցանիշը: Պաշտպանության եւ օգնության կարիք ունեցող անձանց թիվն աճում է եւ ավելանում է Հորդանանում արդեն բնակվող իրաքցիների թվին (ավելի քան 30,300 գրանցված անձինք 2014թ. հուլիսի վերջին): Նոր ժամանած անձանց գրեթե երկու երրորդ մասը (60%) ծագումով Նայնավա, Մալահ Ալ-Դին եւ Ալ-Անբար նահանգների ԻՊ-ի վերահսկողության ներքո գտնվող տարածքներից են: Այդ տարածքներից ժամանած փախստականները նշեցին, որ փախուստի են դիմել, քանի որ հրի են մատնվել իրենց տները, նրանց սպառնացել է հարկադրաբար Մահմեդականություն ընդունելու վտանգը, նրանք վախեցել են հարկադիր ամուսնություններից, առեւտրականներից եւ բաց սպառնալիքներից: Հորդանան նոր ժամանած փախստականների մնացած մասը փախուստի էր դիմել Բաղդադում եւ Բասրայում աղանդավորական բռնությունից:

⁴⁰ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Եգիպտոսը չի սահմանակցում Իրաքի հետ եւ Իրաքի քաղաքացիներին Եգիպտոս մուտք գործելու համար մուտքի արտոնագիր է անհրաժեշտ՝ Եգիպտոսում նոր ժամանումներ չեն ակնկալվում: Այնուամենայնիվ, Եգիպտոսում արդեն բնակվող եւ գրանցվելու նպատակով ՄԱԿ ՓԳՀ-ին դիմած իրաքցիների թիվն աճ է նկատվել: Հաշվի առնելով իրաքցիների տնտեսական միջոցների, Իրաք վերադառնալու հնարավորությունների կրճատումը եւ Իրաքում բնակվող ընտանիքի անդամների կողմից ուղարկվող ոչ բավարար ֆինանսական միջոցները՝ ակնկալվում է, որ այս միտումը կշարունակվի:

⁴¹ 2014թ. հուլիսից Լիբանանում ամեն օր աճում է նոր ժամանող անձանց թիվը եւ ենթադրվում է, որ հաշվի առնելով ներկայիս տեմպերը՝ ի տրամն ներկայումս արդեն գրանցված շուրջ 7000 իրաքցիների՝ եւս 3000 իրաքցի կգրանցվի 2014թ. ավարտին:

⁴² Մեծ թվով եզդիներ պարզապես անցել են Սիրիան եւ շարունակել իրենց ճանապարհը դեպի Իրաքի Քուրդիստան: ՄԱԿ ՓԳՀ Իրաքի արեւից խանձված Սինջար լեռներով անվտանգություն գտնելու դժվար ուղին, 20 օգոստոս 2014թ., <http://www.unhcr.org/53f490159.html>: ՄԱԿ ՓԳՀ, Եզդիները Սինջար լեռն անցնելով գնում են Սիրիա. ՄԱԿ ՓԳՀ-ն մեծացնում է աջակցության մասշտաբները, 14 օգոստոս 2014թ., տե՛ս հետևյալ հղումով՝ <http://www.refworld.org/docid/53ecc9c54.html>:

⁴³ 2013թ. երկրորդ քառորդի համեմատ 2014թ. երկրորդ քառորդում ապաստան հայցող անձանց թիվը ԵՄ-ում աճել է մեկ երրորդով, այսինքն՝ 2,355-ից դարձել է 3,130: Եվրոստատ, Ապաստանի դիմում ներկայացրած անձինք եւ առաջին տարիների որոշումներ՝ ապաստանի տրամադրման վերաբերյալ. երկրորդ եռամսյակ 2014, կ. 5, <http://epp.eurostat.ec.europa.eu/cache/ITY/OFFPIUR/KS-QA-14-011/EN/KS-QA-14-011-EN.pdf>

քաղաքացիական անձանց մահվան դեպք, եւ սա 2006-2007թթ. աղանդավորական հակամարտությունից հետո մահվան դեպքերի ամենաբարձր ցուցանիշն է:⁴⁴ 2014թ. հունվարից սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում ՄԱԿ-ն Իրաքում (բացառությամբ Ալ-Անբարի) արձանագրել է ավելի քան 7,700 քաղաքացիական անձանց մահվան դեպք: Այս տվյալներում ներառված են ավելի քան 4,800 քաղաքացիական անձանց մահվան դեպք 2014թ. հունիսից սկսած, երբ ԻՊ-ն եւ դրա հետ համագործակցող զինված խմբավորումները լայնամասշտաբ հարձակողական գործողություններ սկսեցին Հյուսիսային եւ Արեւելյան Իրաքում:⁴⁵ Իրաքում ՄԱԿ-ի աջակցության առաքելության համաձայն՝ 2014թ. Բաղդադ նահանգում առավելագույն թվով զոհեր են եղել: Այնուհետեւ (բացառությամբ Ալ-Անբարի, եւ ոչ միշտ նույն հեթանոսության) Նայնավա, Սալահ-Ալ Դին, Քիրքուք, Բաբել եւ Դիյալա նահանգներն են:⁴⁶ Իրաքի կառավարությունը հրատարակել է 2014թ. հունվարից հունիս ընկած ժամանակահատվածում զոհերի վերաբերյալ տվյալներ. 6,676 մահվան դեպք, այդ թվում՝ 5,322 քաղաքացիական անձինք էին եւ 512-ը՝ ոստիկաններ, 842-ը՝ զինված ուժերի անդամներ:⁴⁷

14. Սննդի, ջրի պակասի եւ բուժօգնության⁴⁸ բացակայության պատճառով բնության սրացումը հետագայում հանգեցրեց մահվան նոր դեպքերի, վնասվածքների եւ խեղումների,⁴⁹ սեփականության եւ գոյամիջոցների ոչնչացման,⁵⁰ ինչպես նաեւ խոչընդոտեց հիմնարար, կենսական նշանակություն ունեցող ծառայությունների տրամադրմանը:⁵¹

15. Ներկայիս հակամարտությունը հիմնականում տարածված է Ալ-Անբար, Նայնավա, Սալահ Ալ-Դին, Դիյալա, Քիրքուք եւ Բաբել կենտրոնական եւ հյուսիսային նահանգներում: Բաղդադը շարունակում է թիրախ լինել, որտեղ հաճախակի հարձակումներ են իրականացվում, որոնց արդյունքում բազմաթիվ մարդիկ են մահանում: Այդ հարձակումները հաճախ, բայց ոչ միշտ ուղղված են շիական շրջանների վրա:⁵² Բաղդադում նաեւ դիտարկվում է աղանդավորական

⁴⁴ Տե՛ս «Իրաքում զոհերի թիվը» ծրագիր, տվյալների գնահատում՝ 22 հոկտեմբեր 2014թ., տե՛ս հետևյալ հղումով՝ <https://www.iraqbodycount.org/database/>.

⁴⁵ Իրաքում ՄԱԿ-ի աջակցության առաքելության համաձայն սրանք միայն մոտավոր տվյալներ են, իրականում ցուցանիշները կարող են ավելի բարձր լինել: Այս թվերը ներառում են ոստիկանությունում քաղաքացիական ծառայողներին, սակայն դրանք չեն ներառում Իրաքի անվտանգության ուժերի, Պեշտերգալի, SWAT իրավապահ ստորաբաժանման եւ Իրաքի անվտանգության ուժերի հետ միասին պայքարող այլ ուժերի ավելի քան 2500 անդամներին, որոնք սպանվել են 2014թ. հունվարից մինչև սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում: Իրաքում ՄԱԿ-ի աջակցության առաքելություն, ՄԱԿ-ի տվյալները 2014թ. սեպտեմբերի դրությամբ զոհերի թվի վերաբերյալ, բացառությամբ Անբար նահանգի, 1 հոկտեմբեր 2014թ., տե՛ս հետևյալ հղումով՝ <http://bit.ly/1vKq2p8>: Իրաքում ՄԱԿ-ի աջակցության առաքելությունը նաեւ Ալ-Անբար նահանգի առողջապահական կենտրոնից չհաստատված տվյալներ է ստացել մահացածների թվի վերաբերյալ: Այդ տվյալների համաձայն 2014թ. հունվարից մինչև օգոստոս ընկած ժամանակահատվածում զոհացվել են ավելի քան 1 600 սպանվածներ եւ 5 500 վիրավորներ (սպանվածների կամ վիրավորվածների քաղաքացիական անձ լինելու վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է): Տե՛ս Իրաքում ՄԱԿ-ի աջակցության առաքելության ամսական հաշվետվությունները՝ մահացածների վերաբերյալ, տե՛ս հետևյալ հղումով՝ http://www.uniraq.org/index.php?option=com_k2&view=itemlist&task=category&id=159:civilian-casualties: Տե՛ս նաեւ Իրաքում ՄԱԿ-ի աջակցության առաքելություն/ՄԻԳ-2Գ, *Զեկույց Իրաքում զինված հակամարտության ընթացքում քաղաքացիական բնակչության պաշտպանության վերաբերյալ*: 6 հուլիս - 10 սեպտեմբեր 2014թ., 2 հոկտեմբեր 2014թ., կ. 1, <http://www.refworld.org/docid/542d3eb64.html>.

⁴⁶ Ձոհերի թվի վերաբերյալ ՄԱԿ-ի թարմացված տեղեկատվությանը, ինչպես նաեւ յուրաքանչյուր նահանգի դեպքում համեմատական տվյալներին՝ ծանոթանալու համար տե՛ս http://www.uniraq.org/index.php?option=com_k2&view=itemlist&task=category&id=159:civilian-casualties: հետևյալ հղումով՝

⁴⁷ Հետևյալ թվերի համեմատությամբ՝ 2013թ.-ին զոհացված 6,522 զոհ, 2012թ.՝ 2,174, 2011թ.՝ 2,645, 2010թ.՝ 3,605, 2009թ.՝ 3,481, եւ 2008թ.՝ 6,798 զոհ: Իրաքի կառավարության տվյալները զոհերի թվի վերաբերյալ կազմվել է Ֆրանսսպրեսի կողմից, դիտարկման ամսաթիվը՝ 22 հոկտեմբեր 2014թ., տե՛ս հետևյալ հղումով՝ <http://bit.ly/1vNKju8>.

⁴⁸ Իրաքում ՄԱԿ-ի աջակցության առաքելություն/ՄԻԳ-2Գ, *Զեկույց Իրաքում զինված հակամարտության ընթացքում քաղաքացիական բնակչության պաշտպանության վերաբերյալ*, 6 հուլիս - 10 սեպտեմբեր 2014թ., 2 հոկտեմբեր 2014թ., էջ 1, տե՛ս հետևյալ հղումով՝ <http://www.refworld.org/docid/542d3eb64.html>.

⁴⁹ 2014թ. հունվարից մինչև սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում Իրաքում ՄԱԿ-ի աջակցության առաքելությունը զոհացվել է հակամարտության ընթացքում անձանց վիրավորվելու ավելի քան 12,000 դեպք: Իրաքում ՄԱԿ-ի աջակցության առաքելություն, ՄԱԿ-ի տվյալները 2014թ. սեպտեմբերի դրությամբ զոհերի թվի վերաբերյալ, բացառությամբ Անբար նահանգի, 1 հոկտեմբեր 2014թ., <http://bit.ly/1vKq2p8>:

⁵⁰ Բնակարանային ապահովման հարցերով զբաղվող միջգերատեսչական կոմիտե (Shelter Cluster) գնահատել է հակամարտության արդյունքում շենքերին եւ ենթակառուցվածքներին պատճառված վնասը, որը Ալ-Անբար նահանգում ամենազգալի է եղել: Տեղեկություններ հաղորդող անձանց համաձայն Ալ-Անբարում կառույցների 35%-ն ամբողջովին ավերվել է, մյուս 38%-ը՝ չափավոր կամ լուրջ վնասվել: Բնակարանային ապահովման հարցերով զբաղվող միջգերատեսչական կոմիտե (Shelter Cluster), *Օպերատիվ գնահատական. Հաշվետվություն ծագման տարածաշրջանի գնահատման մասին*, հոկտեմբեր 2014թ., կ. 4, <http://shar.es/1moZLp>: Տե՛ս նաեւ IRIN (Տարածաշրջանային տեղեկատվական ընդհանուր ցանց), Մեծ կորուստներ Իրաքի «լված» Անբարում, 6 հոկտեմբեր 2014թ., տե՛ս հետևյալ հղումով՝ <http://shar.es/1moWK6>:

⁵¹ Տե՛ս ստորեւ «Հումանիտար իրավիճակ»:

⁵² Տե՛ս ստորեւ կ. 4:

բնության կտրուկ աճ:⁵³ Քուրդիստանում անվտանգության առումով իրավիճակը համեմատաբար կայուն է, անվտանգության ուժերը մարտական պատրաստվածության վիճակում են եւ խիստ միջոցներ են ձեռնարկվում՝ կանխելու ԻՊ-ի եւ դրա հետ համագործակցող զինված խմբավորումների կողմից իրականացվող հարձակումները:⁵⁴ ԻՇԻՊ-ի եւ դրա հետ համագործակցող զինված խմբավորումների եւ քրդական ուժերի միջև զինված բախումներ տեղի են ունենում նաեւ Քուրդիստանի սահմանին, քանի որ ԻՊ խմբավորման ուժերը զրավել են նաեւ այն տարածքները, որոնք նախկինում գտնվում էին Քրդական ուժերի վերահսկողության ներքո: Հարավային նահանգներում շարունակում են հարձակումներ իրականացվել, այդ թվում՝ մեքենաների ականապատում,⁵⁵ ինչպես նաեւ քաղաքական կուսակցությունների, կրոնական եւ ցեղական համայնքներում գործիչների, պետական սեկտորի աշխատակիցների եւ տարբեր մասնագետների նպատակային սպանություններ/առեւանգումներ եւ հաշվեհարդարի նպատակով կատարվող աղանդավորական հարձակումներ:⁵⁶

Հումանիտար իրավիճակ

16. Պաշարման ռազմավարության եւ կենսական ենթակառուցվածքի վրա հարձակումների հետեւանքով՝ հակամարտության, տեղահանության եւ հիմնական ծառայությունների մատուցման դադարեցման արդյունքում հումանիտար օգնության անհրաժեշտությունը կտրուկ աճեց՝ բարդացնելով Իրաքում արդեն առկա էական հումանիտար խնդիրները, այդ թվում՝ Իրաքում, մասնավորապես Իրաքի Քուրդիստանում ապաստան փնտրող 200,000 սիրիացի փախստականների կարիքները: Ներկայումս Իրաքում ավելի քան 5 մլն մարդ հումանիտար աջակցության կարիք ունի: Սակայն հումանիտար աջակցություն տրամադրող կազմակերպություններն ի վիճակի են օգնություն տրամադրել միայն 1,5 մլն մարդու:⁵⁷ Հաշվի

⁵³ Տե՛ս ստորեւ կ. 9:

⁵⁴ 2014թ. սեպտեմբերի 17-ին Քուրդիստանի Անվտանգության խորհուրդը հայտարարություն հրատարակեց՝ կոչ անելով առավել զգոն լինել, որովհետեւ ԻՊ զինյալները կարող են մուտք գործել տարածաշրջան եւ փորձել իրականացնել ահաբեկչական գործողություններ: Ekurd.net նորությունների աղանց կայք. *Նորություններ Իրաքի Քուրդիստանի վերաբերյալ*, 17 սեպտեմբեր 2014թ., <http://bit.ly/1CUDbQM>: 2014թ. օգոստոսի 23-ին Քուրդիստանի մայրաքաղաք Էրբիլում մեքենայում տեղադրված ռումբ է պայթել. ինչպես հաղորդվում է, քրդական անվտանգության ուժերը զգուշանում են ԻՊ հնարավոր այսպես կոչված գաղտնի գործակալների խմբերից: Christian Science Monitor լրատվական գործակալություն. *Հյուսիսային Իրաքում Բսլամական պետությունը սկսում է կիրառել ահաբեկչական մարտավարություն*, 25 օգոստոս 2014թ., <http://yhoo.it/1qsuoxov>: McClatchy հրատարակչություն, *Քուրդիստանի մայրաքաղաք Էրբիլում մեքենայի պայթյունը մտավախություններ է առաջացնում «Բսլամական պետության» զինյալների հարձակման մասին*, 24 օգոստոս 2014թ., տե՛ս հետևյալ հղումով <http://bit.ly/1tgbGvm>:

⁵⁵ Տե՛ս օրինակ, Ալ Ջազիրա, *Իրաքի Քարբալա քաղաքում տեղի են ունեցել ականապատ մեքենաների պայթյուններ, որոնց հետեւանքով մարդիկ են մահացել*, 20 հոկտեմբեր 2014թ., <http://aje.me/1tEF435>: Associated Press գործակալություն, *Իրաքում ականապատ մեքենաների պայթյունի հետեւանքով 17 մարդ է սպանվել*, 11 սեպտեմբեր 2014թ., <http://yhoo.it/1t29eeg>: Ալ Ջազիրա, *Իրաքում պայթյուններն ուղղված են շիական բնակավայրերի վրա*, 25 օգոստոս 2014թ., <http://aje.me/1wrN88q>: Reuters գործակալություն, *Առնվազն երեք մարդ է սպանվել Իրաքի Բասրայում տեղի ունեցած կրկնակի պայթյունի հետեւանքով*, 5 հուլիս 2014թ., <http://reut.rs/1xo5Dr8>: Իրաքի նորությունների ազգային գործակալություն (NINA), *Քարբալայից հյուսիս տեղի ունեցած մեքենայի պայթյունի հետեւանքով հինգ մարդ սպանվել է, չորսը՝ վիրավորվել*, 11 հունիս 2014թ., <http://bit.ly/ZQKeMz>: Իրաքի նորություններ, *Ներքին գործերի նախարար. Բաքիլում, Նաջաֆում, Դի-Բարում տեղի ունեցած պայթյունների հետեւանքով 23 մարդ է սպանվել եւ վիրավորվել*, 2 հունիս 2014թ., <http://daily.az/1kxuzfS>: Associated Press գործակալություն, *Իրաքում կատարված հարձակումների արդյունքում սպանվել է առնվազն 15 մարդ*, 2 հունիս 2014թ., <http://daily.az/1kxuzfS>: Anadolu գործակալություն, *Իրաքի Վասիտ քաղաքում ռումբի պայթյունի հետեւանքով սպանվել է 10, վիրավորվել 20 մարդ*, 21 ապրիլ 2014թ., <http://u.aa.com.tr/316421>: Al Akhbar հրատարակչություն, *Իրաքում տասներեք ականապատ մեքենա է պայթել*, 9 ապրիլ 2014թ., <http://english.al-akhbar.com/node/19360>: Իրաքի նորությունների ազգային գործակալություն, *Հրատապ լուրեր. Քարբալայից հյուսիս՝ ճամիեզրին մեքենայի պայթյունի հետեւանքով 17 մարդ է սպանվել եւ վիրավորվել*: 18 մարտ 2014թ., <http://bit.ly/1rqsO9k>: New York Times հրատարակչություն, *Հարավային Իրաքում՝ անցակետում մահապարտի իրականացրած պայթյունի հետեւանքով առնվազն 45 մարդ է սպանվել*, 9 մարտ 2014թ., <http://nyti.ms/1fi0buR>:

⁵⁶ Տե՛ս օրինակ Իրաքի նորությունների ազգային գործակալություն (ԻՆԱԳ), Քաղիսսիա նահանգում հեռուստալրագրողի տանը ռումբ է պայթել, 2 սեպտեմբեր 2014թ., <http://bit.ly/1vTaL5n>: Իրաքի նորությունների ազգային գործակալություն, *Պայթյուն Քարբալայի կերտոնում՝ մշակույթի բաժնի տնօրենի տան մոտ՝ ճամիեզրին*, 26 օգոստոս 2014թ., <http://bit.ly/1yM8oXU>: ԻՆԱԳ, *Դիվանիայում Միստանիի երկու ներկայացուցիչների տներում ինքնաշեն ռումբեր են տեղադրվել*, 10 օգոստոս 2014թ., <http://bit.ly/1vNcwkl>: ԻՆԱԳ, *Բասրայում հոգեւորական է սպանվել, մեկուրիչը՝ վիրավորվել*: 8 օգոստոս 2014թ., <http://bit.ly/1oPLkqY>: ԻՆԱԳ, *Բասրայի նահանգապետի քարտուղարը վիրավորվել է ST, Anti-Tank № 74 նռնակի պայթյունի հետեւանքով*, 28 հուլիս 2014թ., <http://bit.ly/1E5NTzD>: ԻՆԱԳ, *Ահաբեկիչները սպանել են Ֆառ խոթրի ինժեներին*, 19 հուլիս 2014թ., <http://bit.ly/1vT4uqi>: ԻՆԱԳ, *Աժ պատգամավորին հաջողվել է փրկվել մահափորձից*, 4 մայիս 2014թ., <http://bit.ly/1oPLF3f>: ԻՆԱԳ, *Բասրայում դատավորի տան եւ հեռուստաաշտարակի մոտ երկու ռումբ է պայթել*, 18 ապրիլ 2014թ., <http://bit.ly/1sc14RK>: ԻՆԱԳ, *Բասրայում սպանվել է ռասիկանության ավագ սպա*, 22 մարտ 2014թ., <http://bit.ly/1ncCAGs>: Պատերազմի հետ կապված հարցերի ուսումնասիրության ինստիտուտ, *Հարավային Իրաքում սունիթական ցեղախմբերի առաջնորդների վրա հարձակումների թիվն աճել է*, Լրացում #40, 27 նոյեմբեր 2013թ., <http://bit.ly/1q0Paem>:

⁵⁷ ՄԱԿ ՄԳԶԳ, *Իրաքում ներքին տեղահանությանը պայմանավորված ձգնաժամային իրավիճակի վերաբերյալ թիվ 13 հաշվեկտրություն*, 20 սեպտեմբեր- 26 սեպտեմբեր 2014թ., 26 սեպտեմբեր 2014թ., կ. 1, <http://shar.es/1moJUD>:

առնելով հումանիտար ճգնաժամի մասշտաբները եւ բարդությունը՝ 2014թ. օգոստոսի 12-ին ՄԱԿ-ն Իրաքում հայտարարեց «3-րդ մակարդակի արտակարգ դրություն» (լայնամասշտաբ հումանիտար ճգնաժամի դեպքում), որը երկրում ստեղծված ճգնաժամային իրավիճակի ամենաբարձր ցուցանիշն է:⁵⁸

17. Հատկապես մտահոգության առարկա է հակամարտության տարածքներում բնակվող բնակչության տարբեր խմբերի հումանիտար իրավիճակը: Նրանք բացարձակապես կամ գրեթե լիովին զրկված են հիմնական ծառայություններից օգտվելու, սնունդ եւ այլ ապրանքներ ձեռք բերելու հնարավորություններից, իսկ անվտանգությամբ, բյուրոկրատական եւ քաղաքական սահմանափակումներով պայմանավորված՝ միջազգային կազմակերպությունները չեն կարողանում նրանց օգնություն տրամադրել:⁵⁹ Հաղորդվում է, որ մատակարարման մի շարք առանցքային երթուղիներ արգելափակվել են, որ իշխանությունները, մի շարք դեպքերում վարչական պատճառներով կամ ռազմական գործողությունների իրականացման տարածքով պայմանավորված, սահմանափակել են հումանիտար օգնության մատակարարման հնարավորությունը:⁶⁰ Այդ տարածքներում ներկայիս իրավիճակի վերաբերյալ տեղեկատվությունը սահմանափակ է:⁶¹ Ինչպես հաղորդվում է, զինված խմբավորումները միտումնավոր որպես թիրախ են ընտրել հիմնական եւ կոմունալ ծառայությունների ենթակառուցվածքները, ինչպիսիք են օրինակ ջրամատակարարման համակարգը եւ էլեկտրական ցանցերը:⁶² Շատ տարածքներում առողջապահության ոլորտի ենթակառուցվածքը վնասված է եւ բժշկական ծառայությունների մատուցումը դադարեցվել է հակամարտության պատճառով:⁶³

18. Այնուհետեւ իրավիճակն ավելի բարդացավ անհրաժեշտ պարագաների, էլեկտրոէներգիայի, ջրի պակասի արդյունքում,⁶⁴ ինչպես նաեւ այն պատճառով, որ այդ վայրերում քիչ թվով բուժաշխատողներ էին մնացել, քանի որ մեծ մասը փախուստի էր դիմել:⁶⁵ Երկրում Սննդի

⁵⁸ Իրաքում ՄԱԿ-ի աջակցության առաքելություն, Ավելի արդյունավետ հումանիտար օգնության նպատակով ՄԱԿ-ն Իրաքում հայտարարում է «3-րդ մակարդակի արտակարգ դրություն», 19 օգոստոս 2014թ., <http://www.refworld.org/docid/53f32334.html>:

⁵⁹ Ինչպես հաղորդվում է, «չափազանց դժվար է» հումանիտար օգնություն մատակարարել Նայնավա, Ալ-Անբար, Քիրքուք, Սալահ Ալ-Դին եւ Դիյալա նահանգներ: ՄԱԿ ՄԳՀԳ, *Ակնարկ հումանիտար կարիքների վերաբերյալ*, 26 սեպտեմբեր, 2014թ., կ. 25, <http://bit.ly/1xoOfCD>: Տե՛ս նաեւ ՄԱԿ ՄԳՀԳ, *Իրաք. Իրավիճակի վերանայում թիվ 2*, 12 հոկտեմբեր 2014թ., կկ. 1-2, <http://shar.es/1mGjKu>: ՄԱԿ Նորությունների ծառայություն, *Իրաք. ՄԱԿ-ի փախստականների հարցերով գործակալությունը տեղահանված անձանց հումանիտար օգնության տրամադրման լայնամասշտաբ ծրագիր է սկսել*, 19 օգոստոս 2014թ., <http://www.refworld.org/docid/53f746944.html>: (Տարածաշրջանային տեղեկատվական ընդհանուր ցանց), *Չնայած ֆինասավորման աճին՝ Իրաքին տրամադրվող աջակցությունը «բավարար չէ»*, 15 օգոստոս 2014թ., տե՛ս հետեւյալ հղումով՝ <http://www.refworld.org/docid/53f32794.html>:

⁶⁰ ՄԱԿ ՄԳՀԳ, *Իրաքում ներքին տեղահանությամբ պայմանավորված ճգնաժամային իրավիճակի վերաբերյալ թիվ 13 հաշվետվություն*, 20 սեպտեմբեր – 26 սեպտեմբեր 2014թ., 26 սեպտեմբեր 2014թ., էջ 2, <http://shar.es/1moJUD>:

⁶¹ ACAPS (Կարողությունների գնահատման) ծրագիր, *Տեղեկատվական նշում. Բնության հումանիտար հետեւանքները Հյուսիսային եւ Կենտրոնական Իրաքում*, 7 օգոստոս 2014թ., <http://shar.es/11YPI4>:

⁶² ՄԱԿ ՄԳՀԳ, *Ակնարկ հումանիտար կարիքների վերաբերյալ*, 26 սեպտեմբեր 2014թ., էջ 26, <http://bit.ly/1xoOfCD>: Իրաքում՝ ՄԱԿ-ի աջակցության առաքելություն/ՄԱԿ ՄԳՀԳ, *Անհրաժեշտ է հումանիտար օգնության առանց խոչընդոտների անհապաղ, անվտանգ մատակարարում*: 31 հուլիս 2014թ., տե՛ս հետեւյալ հղումով՝ <http://shar.es/11jpoZ>:

⁶³ ՄԱԿ ՄԳՀԳ, *Ակնարկ հումանիտար կարիքների վերաբերյալ*, 26 սեպտեմբեր 2014թ., կկ. 13-14, <http://bit.ly/1xoOfCD>: Օրինակ, Սալահ Ալ-Դին նահանգում ինը հիվանդանոցից միայն երկուսն են լիովին գործում: ՄԱԿ ՄԳՀԳ, *Իրաքում ներքին տեղահանությամբ պայմանավորված ճգնաժամային իրավիճակի վերաբերյալ թիվ 12 հաշվետվություն*, 13 սեպտեմբեր – 19 սեպտեմբեր 2014թ., 19 սեպտեմբեր 2014թ., էջ 4, <http://reliefweb.int/sites/reliefweb.int/files/resources/Iraq.pdf>: ԱՀԿ համաձայն Սիեջար շրջանում (Նայնավա) գտնվող կենտրոնական հիվանդանոցը եւ առաջնային բուժօգնության/առողջապահական թիվ 16 եւ 19 կենտրոնները չեն գործում: ԱՀԿ, *Health Emergency Highlights (Ամսվա կտրվածքով հաստատվող փաստաթուղթ հումանիտար իրավիճակի, խնդիրների եւ ձեռնարկվող միջոցառումների մասին)*, Issue #17, 31 օգոստոս 2014թ., <http://shar.es/1a0hdB>:

⁶⁴ ՄԱԿ ՄԳՀԳ, *Ակնարկ հումանիտար կարիքների վերաբերյալ*, 26 սեպտեմբեր 2014թ., էջ 14, տե՛ս հետեւյալ հղումով՝ <http://bit.ly/1xoOfCD>:

⁶⁵ Իրաքում «Բժիշկներ առանց սահմանների» կազմակերպության առաքելության ղեկավար Ֆաբիո Ֆորջոնե. «Մենք բուժաշխատողներից պարբերաբար տեղեկություններ ենք ստանում այն մասին, որ վերջին շաբաթների ընթացքում ավելի ու ավելի շատ հիվանդանոցներ են ուբակոծվում (...): Բուժաշխատողները փախուստի են դիմել, քանի որ վախեցել են, որ կարող են ուբակոծվել այն բժշկական կենտրոնները, որտեղ նրանք աշխատել են: Մենք չափազանց մտահոգված ենք այն հանգամանքով, որ զգալի թվով մարդիկ այժմ զրկված են իրենց անհրաժեշտ բուժօգնությունից»: «Բժիշկներ առանց սահմանների»: *Ռաբակոծության արդյունքում ոչնչացվել են Իրաքի հիվանդանոցները*, 24 հուլիս 2014թ., <http://shar.es/11jz9>: Տե՛ս նաեւ ԱՀԿ, *Health Emergency Highlights*, Issue #17, 31 օգոստոս 2014թ., <http://shar.es/1a0hdB>: Իրաքում ՄԱԿ-ի աջակցության առաքելություն/ՄԻԳՀԳ, *Ջեկույց Իրաքում ոչ միջազգային բնույթ կրող զինված հակամարտության ընթացքում քաղաքացիական բնակչության պաշտպանության վերաբերյալ*, 5 հունիս – 5 հուլիս 2014թ., 18 հունիս 2014թ., Խ 21

բաշխման հանրային համակարգի փլուզումը (PDS), որն իրաքցիների ամենաաղքատ խմբերի⁶⁶ համար սննդամթերք ստանալու հիմնական աղբյուրն է, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրանքի ոչնչացումը եւ բռնագրավումը, շուկաների աշխատանքի խափանումը, ստեղծված վտանգավոր իրավիճակը եւ զանգվածային տեղահանությունները բացասական են անդրադառնում բնակչության սնունդ հայթայթելու կարողության վրա: Երկրի բոլոր տարածքներում պարենային անվտանգության ապահովումը վտանգված է, քանի որ մայիս/հունիս ամիսների հացահատիկի բերքը չի հավաքվել Նայնավա եւ Սալահ Ալ-Դին նահանգներում հացահատիկի առաջատար արտադրող համարվող տարածքներում, որոնք վերջերս տուժել են հակամարտության պատճառով:⁶⁷ Ալ-Անբարում բնակչության վերջերս տեղի ունեցած տեղահանության պատճառով կարող է խափանվել հոկտեմբեր/նոյեմբեր ամիսների ցորենի ցանքսը:⁶⁸ Համաձայն Մերձավոր Արեւելքում, Հյուսիսային Աֆրիկայում, Կենտրոնական Ասիայում եւ Արեւելյան Եվրոպայում ՊՃԾ տարածաշրջանային ներկայացուցչության տնօրեն Մոհամեդ Դիաբի՝ «Պարենային անվտանգության ապահովման հարցն Իրաքում մտահոգիչ է. նման տագնապալի իրավիճակ երկրում չի եղել 1990-ականների սկզբում տույժերի կիրառումից հետո»:⁶⁹

19. Տեղահանության նպատակով ընտրված տարածքներում տեղական իշխանությունները եւ համայնքները չափազանց ծանրաբեռնված են եւ անկարող են հիմնական ծառայություններով եւ հանրային ենթակառուցվածքով ապահովել բոլոր ներքին տեղահանված անձանց, որոնցից շատերը միայն հագուստով լի մեկ ուսապարկ կամ իրենց գոյատեւման համար ոչ բավարար միջոցներ ունեն:⁷⁰ Առաջնահերթ խնդիր է կացարանի բավարար պայմանների ապահովումը: Տեղահանված անձանց տեղավորման հիմնական տարբերակը նրանց՝ ընդունող համայնքների հետ բնակեցումն է: Այնուամենայնիվ, քանի որ զանգվածային տեղահանությամբ պայմանավորված ճգնաժամի հետեւանքով կացարանների թիվը, որտեղ հնարավոր էր տեղավորել տեղահանված բնակչությանը, կտրուկ կրճատվել է, իսկ կացարանի վարձավճարը զգալիորեն բարձրացել, վերջերս տեղահանված բազմաթիվ անձինք ստիպված են բնակություն հաստատել կիսակառույց կամ լքված շինություններում, դպրոցներում, մզկիթներում եւ եկեղեցիներում: Մյուսներն ապրում են բաց տարածքներում անընդունելի բնակարանային պայմաններում,⁷¹ որի պատճառով նրանց առողջությանը լուրջ վտանգ է սպառնում առաջիկա

http://www.ohchr.org/Documents/Countries/IO/UNAMI_OHCHR_POC_Report_FINAL_18July2014A.pdf, HRW, *Իրաք. Կառավարական ուժերը ուժակոծել են Ֆայուջա քաղաքում գտնվող հիվանդանոցը*, 27 մայիս 2014թ., տե՛ս հետևյալ հղումով՝ <http://www.refworld.org/docid/538d99144.html>.

⁶⁶ ՄԱԿ ՄԳՀԳ, *Ակնարկ հումանիտար կարիքների վերաբերյալ*, 26 սեպտեմբեր 2014թ., էջ 3, <http://bit.ly/1xoOfCD>:

⁶⁷ Նայնավա եւ Սալահ Ալ-Դին նահանգներում աճեցվում է Իրաքի ամբողջ ցորենի մեկ երրորդ մասը եւ զարու մոտ 38%-ը: ՄԱԿ ՄԳՀԳ, *Իրաքում ներքին տեղահանությամբ պայմանավորված ճգնաժամային իրավիճակի վերաբերյալ թիվ 4 հաշվետվություն*, 19-26 հուլիս 2014, 26 հուլիս 2014թ., էջ 2, <http://shar.es/11jqet>; ՄԱԿ-Ի Պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպություն, *Իրաք. Հակամարտության պատճառով լուրջ մտահոգություններ են առաջանում սննդի ապահովման վերաբերյալ*, 25 հունիս 2014թ., <http://www.fao.org/news/story/en/item/237162/icode/>. Տե՛ս նաև Reuters, *Հատուկ զեկույց. Իսլամական պետությունն օգտագործում է ցորենի արտադրությունը՝ Իրաքում հսկողությունը խստացնելու նպատակով*, 30 սեպտեմբեր 2014թ., <http://reut.rs/1DUWryZ>:

⁶⁸ ՄԱԿ ՄԳՀԳ, *Իրաքում ներքին տեղահանությամբ պայմանավորված ճգնաժամային իրավիճակի վերաբերյալ թիվ 16 հաշվետվություն*, 11 - 17 հոկտեմբեր 2014թ., 17 հոկտեմբեր 2014թ., էջ 2, տե՛ս հետևյալ հղումով՝ <http://shar.es/1mQF6i>:

⁶⁹ Պարենի համաշխարհային ծրագիր, *Սաուդյան Արաբիայի կողմից տրամադրված օգնությունը հնարավոր է դարձնում կյանքեր փրկել եւ ՊՃԾ-ին թույլ է տալիս պատասխան միջոցներ ձեռնարկել Իրաքում պարենային ճգնաժամի հաղթահարման համար*, 19 օգոստոս 2014թ., տե՛ս հետևյալ հղումով՝ <http://bit.ly/1pD5vxj>:

⁷⁰ «Չնայած ՄԱԿ-ը եւ հումանիտար աջակցության հարցերով նրա գործընկեր կազմակերպություններն Իրաքի կառավարության հետ համատեղ, ճգնաժամը հաղթահարելու նպատակով կիրառում են հումանիտար օգնության բոլոր միջոցները՝ իշխանությունները եւ միջազգային համայնքը դեռևս անկարող են լուծում գտնել ճգնաժամի համար»: ՄԱԿ ՄԳՀԳ, *Ակնարկ հումանիտար կարիքների վերաբերյալ*, 26 սեպտեմբեր 2014թ., էջ 1, <http://bit.ly/1xoOfCD>: Համաձայն Քուրդիստանի տարածաշրջանային կառավարության (ՔՏԿ)՝ «Կառավարական մարմինները, որոնք անկարող են միայնակ հաղթահարել այս ճգնաժամը, չունեն միջոցներ այս ընտանիքների հիմնական կարիքները հոգալու համար», ՔՏԿ, *Դուխոկ նահանգը շարունակում է օգնություն տրամադրել տեղահանված ընտանիքներին*, 12 սեպտեմբեր 2014թ., տե՛ս հետևյալ հղումով՝ <http://shar.es/1a0Gwp> Շրջաններում ՆՏԱ ներկայությունը հիմնականում հավելյալ բեռ է ընդունող համայնքների համար եւ գերազանցում է համայնքների՝ այդ անձանց աջակցություն ցուցաբերելու նրանց կարողությունը: ԿԻՄԿ, *Իրաք. Հակամարտությունից տուժած ավելի քան 1մլն մարդկանց օգնություն է տրամադրվում ԿԻՄԿ-ի կողմից*, 4 սեպտեմբեր 2014թ., <http://bit.ly/1wd4eTV>:

⁷¹ Իրաքում ներքին տեղահանված անձանց մեծ մասը շարունակում է ապրել ընդունող ընտանիքներում կամ վարձակալված կացարաններում, այնուամենայնիվ, զգալի թվով ներքին տեղահանված անձինք գտել են կացարանի այլընտրանքային տարբերակներ՝ դպրոցի շենքեր, կրոնական նշանակություն ունեցող կառույցներ եւ կիսակառույց շենքեր: Հարավում տեղահանված անձանց 62%-ը տեղավորվել է կոռեանս նշանակություն:

ձևերով և ընթացքում:⁷² Ինչպես հաղորդվում է, բնակարանային ոչ բավարար պայմանների արդյունքում տեղի է ունենում երկրորդ տեղահանությունը:⁷³ Մտավախություններ կան, որ ներկայումս Քերբալայում և Լաջաֆում գտնվող մզկիթներում և ուխտագնացների համար նախատեսված հյուրատներում ժամանակավորապես բնակվող ներքին տեղահանված անձանց կարող են վտարել առաջիկա կրոնական տոների պատճառով:⁷⁴ Գերբնակեցված տարածքներում բնակության և մեկուսանալու սահմանափակ հնարավորության կամ դրա բացակայության պատճառով մտավախություններ են առաջանում այդ անձանց պաշտպանության, այդ թվում հատկապես կանանց և երեխաների նկատմամբ ճնշումների և նրանց շահագործման այլ ձևերի վերաբերյալ:⁷⁵ Մի շարք ճամբարներ գործում են կամ վերանորոգվում են կամ կառուցվում՝ չնայած ոչ բոլոր կառույցներն են համապատասխանում նվազագույն չափանիշներին, կամ դրանց կառուցման կամ ճամբարներում աշխատանքների համակարգման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները բավարար չեն:⁷⁶ Դիտարկվում է լրացուցիչ ճամբարների կառուցման անհրաժեշտությունը:⁷⁷ Զգալի թվով դպրոցներ դեռևս զբաղեցված են ներքին տեղահանված անձանց, զինված խմբավորումների կողմից կամ վնասվել կամ քանդվել են հակամարտության ընթացքում:⁷⁸

ունեցող կառույցներում, մինչդեռ Իրաքի Քուրդիստանում 15%-ը բնակվում է կիսակառույց շենքերում, 12%-ը՝ դպրոցներում: ՄՄԿ, *Տեղահանված անձանց տեղաշարժերին հետևելու ծրագիր*, VII շրջան, թիվ 1 հաշվետվություն, 20 հոկտեմբեր 2014թ., էջ 5, <http://shar.es/1mQDKI>: Համաձայն Անհապաղ արձագանքման պլանի՝ նախատեսված Իրաքի Քուրդիստանում ներքին տեղահանությամբ պայմանավորված ճգնաժամի հաղթահարման համար՝ ԼՏԱ 45%-ը ներկայումս ապրում է այնպիսի «անընդունելի/խոցելի/կացարաններում», ինչպիսիք են կիսակառույց շենքերը, որպես կացարան չնախատեսված բնակավայրերը և խմբերի տեղավորման կենտրոնները: Պլանավորման նախարարություն-ՔՏԿ/ՄԱԿ, *Իրաքի Անհապաղ արձագանքման պլանի նախատեսված Իրաքի Քուրդիստանում ներքին տեղահանությամբ պայմանավորված ճգնաժամի հաղթահարման համար: 15 սեպտեմբեր - 15 նոյեմբեր 2014թ.*, 28 սեպտեմբեր 2014թ., էջ 4, <http://shar.es/1m0lzo>: Տե՛ս նաև IRIN, Մեծ կորուստներ Իրաքի «լքված» Անբարում, 6 հոկտեմբեր 2014թ., <http://shar.es/1m0WK6>: ՄՄԿ/Ճամբարների համակարգմամբ և վերահսկմամբ զբաղվող խումբ (CCCM Cluster) /REACH, *Իրաքում ներքին տեղահանությամբ պայմանավորված ճգնաժամի գնահատման զեկույց*, 10 սեպտեմբեր 2014թ., տե՛ս հետևյալ հղումով՝ <http://shar.es/1a0oWr>:

⁷² ՄՄԿ գնահատականի համաձայն՝ 1.26 մլն ներքին տեղահանված անձանց ամբողջ Իրաքում վտանգ է սպառնում ձմռան առաջիկա ցրտերի պատճառով, հատկապես վտանգված են այն անձինք, որոնք բնակվում են ճամբարներում, որպես կացարան չնախատեսված տարածքներում և բնակարանային անբավարար պայմաններ ունեցող կացարաններում: ՄՄԿ ՄԳԶԳ, *Իրաքում ճգնաժամային իրավիճակի վերաբերյալ թիվ 15 հաշվետվություն*, 4 հոկտեմբեր - 10 հոկտեմբեր 2014թ., էջ 2, <http://shar.es/1mGj5P>: Տե՛ս նաև NPR ռադիոկայան, *ԻՐԻ-ի գործողությունների պատճառով Իրաքից տեղահանված անձանց նոր վտանգ է սպառնում*, *Չմեռ*, 12 հոկտեմբեր 2014թ., <http://shar.es/1mGhAN>: Պլանավորման նախարարություն-ՔՏԿ/ՄԱԿ, Անհապաղ արձագանքման պլանի՝ նախատեսված Իրաքի Քուրդիստանում ներքին տեղահանությամբ պայմանավորված ճգնաժամի հաղթահարման համար: 15 սեպտեմբեր - 15 նոյեմբեր 2014թ., 28 սեպտեմբեր 2014թ., էջ 4, <http://shar.es/1m0lzo>: ՄՄԿ ՄԳԶԳ, *ՄԱԿ հումանիտար հարցերով լիազոր անձը հայտարարում է Իրաքից տեղահանված անձանց մինչև ձմռան սկսելը ավելի շատ կացարաններ և պաշտպանություն տրամադրելու անհրաժեշտության մասին*, 14 սեպտեմբեր 2014թ., <http://shar.es/1a0adF>: ՄՀ, *«Նրանք չգիտե՛ն, որ ձմեռը մոտենում է»: Տեղահանված անձանց հուսալքությունն ու մտավախությունները*, 8 սեպտեմբեր 2014թ., տե՛ս հետևյալ հղումով՝ <http://ow.ly/BeH8y>:

⁷³ Օրինակ, 2014թ. սեպտեմբերին Քիրքուքում հաղորդվում էր նոր տեղահանության մասին, քանի որ ներքին տեղահանված անձանց բազմաթիվ ընտանիքներ, բնակություն հաստատելով Քիրքուք քաղաքում գտնվող կիսակառույց շենքերում, հարկադրված էին ապրել դժվար պայմաններում: ՄՄԿ, *Տեղահանված անձանց տեղաշարժերին հետևելու ծրագիր*, VI շրջան, թիվ III հաշվետվություն, հոկտեմբեր 2014թ., էջ 5, <http://iomiraq.net/file/1270/download?token=aH5gss0>:

⁷⁴ ՄՄԿ ՄԳԶԳ, *Իրաքում ճգնաժամային իրավիճակի վերաբերյալ թիվ 15 հաշվետվություն: 4 հոկտեմբեր - 10 հոկտեմբեր 2014թ.*, էջ 1, <http://shar.es/1mGj5P>:

⁷⁵ ՄՄԿ ՄԳԶԳ, *Ակնարկ հումանիտար կարիքների վերաբերյալ*, 26 սեպտեմբեր 2014թ., էջ 15, <http://bit.ly/1xoOfCD>: Իրաքում ՄՄԿ-ի աջակցության առաքելություն/ՄԻԳԶԳ, *Չեկույց Իրաքում ոչ միջազգային բնույթ կրող զինված հակամարտության ընթացքում քաղաքացիական բնակչության պաշտպանության վերաբերյալ*, 5 հունիս - 5 հուլիս 2014թ., 18 հուլիս 2014թ., էջ 21, <http://www.refworld.org/docid/53ce0f0d4.htm>:

⁷⁶ ՄՄԿ ՄԳԶԳ, *Իրաքում ճգնաժամային իրավիճակի վերաբերյալ թիվ 15 հաշվետվություն, 4 հոկտեմբեր - 10 հոկտեմբեր 2014թ.*, էջ 4, <http://shar.es/1mGj5P>: ՄՄԿ ՄԳԶԳ, *Իրաքի Քուրդիստանում ներքին տեղահանությամբ պայմանավորված ճգնաժամային իրավիճակի վերաբերյալ թիվ 13 հաշվետվություն, 20 սեպտեմբեր 2014թ.*, 26 սեպտեմբեր 2014թ., էջ 4, <http://shar.es/1m0JUD>:

⁷⁷ ՄՄԿ, *Ակնարկ Հյուսիսային Իրաքում ներքին տեղահանության համար ընտրված արդեն գոյություն ունեցող կամ հավանական տարածքների վերաբերյալ (2014թ. սեպտեմբերի 13-ի դրությամբ)*, 14 սեպտեմբեր 2014թ., <http://shar.es/1a0GBR>: ՄՄԿ ՓԳՀ, *Հյուսիսային Իրաքում կացարանի անհրաժեշտությունն աճում է*, ՄՄԿ ՓԳՀ-ն սկսում է օգնության տրամադրման ծրագիր, 5 սեպտեմբեր 2014, <http://www.unhcr.org/5409834b9.html>: ՄՄԿ ՄԳԶԳ, Իրաքի Քուրդիստանում ներքին տեղահանությամբ պայմանավորված ճգնաժամային իրավիճակի վերաբերյալ թիվ 9 հաշվետվություն, 23 - 29 օգոստոս 2014թ., <http://shar.es/114qzm>: ՔՏԿ-ն ճամբարների տեղակայման համար 26 վայր է ընտրել Էրբիլ, Սուլեյմանիա և Դախուկ նահանգներում, որտեղ կկարողանան մնալ 240,000 ԼՏԱ: Այնուամենայնիվ, համաձայն ՄՄԿ ՄԳԶԳ-ի առկա ռեսուրսները բավարար չեն: ՅՈՒՆԻՍԵՖ, *Իրաքում հումանիտար իրավիճակի վերաբերյալ շարափական կտրվածքով ներկայացվող հաշվետվություն, 26 օգոստոս - 1 սեպտեմբեր 2014թ.*, 1 սեպտեմբեր 2014, <http://shar.es/11jSop>:

⁷⁸ 2014թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ ներքին տեղահանված անձինք մնում էին Ալ-Անբար նահանգում գտնվող 435 դպրոցներում և Դիյալա նահանգում՝ 69 դպրոցում, եւս 137 դպրոց զբաղեցված էր զինված խմբավորումների կողմից: Բաղդադում 29 դպրոց զբաղեցված է կամ վնասվել է ռազմական գործողությունների ընթացքում: Դախուկ նահանգում ԼՏԱ ընտանիքները զբաղեցնում են 501 դպրոց, մինչդեռ անձինք հեռացել են 125 դպրոցից՝ երբեմն մինչ կացարանի այլընտրանք գտնելը: ՄՄԿ ՄԳԶԳ, *Իրաքում ճգնաժամային իրավիճակի վերաբերյալ թիվ 15 հաշվետվություն, 4 հոկտեմբեր - 10 հոկտեմբեր 2014թ.*, 10 հոկտեմբեր 2014թ., էջ 6, տե՛ս հետևյալ հղումով՝ <http://shar.es/1mGj5P>:

20. Ներքին տեղահանված անձանց ընդունող համայնքներում հակամարտության պատճառով, հատկապես Կենտրոնական Իրաքում եւ Դախուկ նահանգում զգալիորեն հետաձգվել է ուսումնական տարին:⁷⁹ Երկարաժամկետ հետաձգումները կարող են ՆՏԱ ներկայության պատճառով այդ համայնքների վրդովմունքն առաջացնել:⁸⁰ Գերբնակեցումը, լեզվական արգելքները եւ տարբերություններն ուսումնական ծրագրերում (Իրաքի Քուրդիստան), ինչպես նաեւ գրանցման հետ կապված բարդություններն ավելի են դժվարացնում կրթության հասանելիությունը երեխաներին:⁸¹ Ինչպես հաղորդվում է, կրթական համակարգի վրա բացասաբար է անդրադառնում այն, որ Իրաքի 95,000 ուսուցիչների ավելի քան կեսը տեղահանվել է այլ շրջաններ:⁸² Մեծ թվով ներքին տեղահանված անձինք պարենային աջակցության խիստ անհրաժեշտություն ունեն:⁸³ Հումանիտար կազմակերպություններն իրենց մտահոգությունն են արտահայտել այն կապակցությամբ, որ բաց տարածքներում, կիսակառույց շենքերում, դպրոցներում եւ այլ ժամանակավոր կացարաններում բնակություն հաստատած ներքին տեղահանված անձանց անհապաղ ջուր, սանիտարական մաքրում եւ հիգիենայի միջոցներ են անհրաժեշտ (WASH)⁸⁴:

21. Ինչպես հաղորդվում է, մեծ թվով ՆՏԱ ժամանումների պատճառով առողջապահական տեղական հաստատությունները գերծանրաբեռնված են, իսկ առաջնային բուժօգնության կենտրոններում հաճախ առաջին անհրաժեշտության եւ քրոնիկ հիվանդությունների համար պահանջվող դեղորայքը բավարար չէ:⁸⁵ Հատկապես կիսակառույց շինություններում եւ բաց տարածքներում բնակվող ներքին տեղահանված անձանց դժվար է օգտվել առողջապահական

⁷⁹ Ջբաղեցված կամ վնասված/քանդված դպրոցների վերաբերյալ տեղեկատվության համար տե՛ս Իրաքում ՄԱԿ-ի աջակցության առաքելություն, *Իրաքում ձգնաժամային իրավիճակի վերլուծություն. Դպրոցներ*, 19 հոկտեմբեր 2014թ., <http://shar.es/1mQyAK>: Տե՛ս նաեւ ՅՈՒՆԻՍԵՖ/ Հումանիտար իրավիճակում կրթության հարցերով զբաղվող խումբ (Education Cluster), *Կրթությունը չի կարող սպասել. Իրաքում կրթական ոլորտում ձգնաժամ է*, 16 օգոստոս 2014թ., տե՛ս հետևյալ հղումով՝ <http://shar.es/11YQo9>:

⁸⁰ ՄԱԿ ՄԳՀԳ, *Իրաքում ներքին տեղահանության պայմանավորված ձգնաժամային իրավիճակի վերաբերյալ թիվ 11 հաշվետվություն. 6 սեպտեմբեր – 12 սեպտեմբեր 2014թ., 12 սեպտեմբեր 2014թ.*, p. 1, <http://shar.es/1a000z>: Տե՛ս նաեւ *Ուշադրության կենտրոնում արտաքին քաղաքականությունն է. Իրաքում դպրոցները վերածվում են կացարանների*, 9 սեպտեմբեր 2014թ., տե՛ս նաեւ հետևյալ հղումով՝ <http://www.hrw.org/news/2014/09/09/schools-shelters-iraq>:

⁸¹ ՄԱԿ ՄԳՀԳ, *Իրաքում ներքին տեղահանության պայմանավորված ձգնաժամային իրավիճակի վերաբերյալ թիվ 14 հաշվետվություն. 26 սեպտեմբեր – 3 հոկտեմբեր 2014թ., 3 հոկտեմբեր 2014թ.*, էջ 7, <http://shar.es/1mowRL>; ՔՏԿ Պլանավորման նախարարություն/ՄԱԿ, *Անհապաղ արձագանքման պլան՝ նախատեսված Իրաքի Քուրդիստանում ներքին տեղահանության պայմանավորված ձգնաժամային իրավիճակի հաղթահարման համար. 15 սեպտեմբեր – 15 նոյեմբեր 2014թ.*, 28 սեպտեմբեր 2014թ., էջ 17, տե՛ս նաեւ հետևյալ հղումով՝ <http://shar.es/1molzo>:

⁸² ՅՈՒՆԻՍԵՖ, *Իրաքում հումանիտար իրավիճակի վերաբերյալ շաբաթական կտրվածքով ներկայացվող հաշվետվություն. 12 – 18 օգոստոս 2014թ.*, 18 օգոստոս 2014թ., տե՛ս հետևյալ հղումով՝ <http://bit.ly/1oTsn6c>:

⁸³ ՄԱԿ ՄԳՀԳ, *Իրաքում ներքին տեղահանության պայմանավորված ձգնաժամային իրավիճակի վերաբերյալ թիվ 14 հաշվետվություն. 26 սեպտեմբեր – 3 հոկտեմբեր 2014թ., 3 հոկտեմբեր 2014թ.*, էջ 4, տե՛ս հետևյալ հղումով՝ <http://shar.es/1mowRL>:

⁸⁴ Օրինակ, ներկայումս Իրաքի Քուրդիստանի Չախու եւ Դախուկ քաղաքների դպրոցներում եւ որպես կացարան չնախատեսված տարածքներում բնակություն հաստատած ներքին տեղահանված բազմաթիվ անձանց խիստ անհրաժեշտ են սանիտարահիգիենիկ հարմարություններ: Հումանիտար աջակցություն տրամադրող կազմակերպությունները հաղորդում են, որ դժվար է իրականացնել ներքին տեղահանված անձանց համար տարածքների ընտրությունը, զնահատել նրանց կարիքները եւ օգնություն տրամադրել հատկապես այն պատճառով, որ բազմաթիվ նման տարածքներ կան եւ որ բնակչությունն անընդհատ մեկ վայրից մյուսն է տեղափոխվում: ՄԱԿ ՄԳՀԳ, *Իրաքում ներքին տեղահանության պայմանավորված ձգնաժամային իրավիճակի վերաբերյալ թիվ 11 հաշվետվություն; 6 սեպտեմբեր-12 սեպտեմբեր 2014թ.*, 12 սեպտեմբեր 2014թ., էջ 2, տե՛ս հետևյալ հղումով՝ <http://shar.es/1a000z>:

⁸⁵ Այն դեպքերում, երբ [առողջապահական/բժշկական] հաստատություններ կան եւ գործում են, ապա այդտեղ են հայտնվում մեծ թվով տեղահանված անձինք: ԱՀԿ, *Health Emergency Highlights*, Issue #17, 31 օգոստոս 2014թ., <http://shar.es/1a0hdB>: Ինչպես հաղորդվում է, Քուրդիստանում քրոնիկ հիվանդությունների բուժման համար բավարար քանակությամբ դեղմիջոցներ չկան, քիչ թվով բուժաշխատողներ կան բուժկենտրոններում՝ տեղակայված այն տարածքներում, որտեղ վերջին մի քանի ամիսների ընթացքում մեծ թվով տեղահանված անձինք են հայտնվել: Ինչպես հաղորդում են հումանիտար կազմակերպությունները, իրապես խնդիր էր առողջապահական ծառայություններ մատուցել ներքին տեղահանված անձանց, որոնք ապրում էին տարբեր վայրերում կիսակառույց շենքերում եւ բաց տարածքներում: ՄԱԿ ՄԳՀԳ, *Իրաքում ներքին տեղահանության պայմանավորված ձգնաժամային իրավիճակի վերաբերյալ թիվ 10 հաշվետվություն. 30 օգոստոս – 5 սեպտեմբեր 2014թ.*, 5 սեպտեմբեր 2014թ., էջ 4, <http://shar.es/11ARZD>: «Ավելի քան 80,000 անձանց տեղահանությունը դեպի Իրաքի հարավային շրջաններ(Նաջաֆ, Քերքուկ, Բաքիլո եւ Քադիսայա) ահեղի բեռ է բժշկական կենտրոնների համար, հատկապես այն պատճառով, որ վերջերս ժամանած անձինք առապում են վարակիչ (ջրծաղիկ, փորլուծություն եւ կարմրուկ) եւ ոչ վարակիչ հիվանդություններով (հիպերտոնիա եւ շաքարախտ)»: ՄԱԿ ՄԳՀԳ, *Իրաքում ներքին տեղահանության պայմանավորված ձգնաժամային իրավիճակի վերաբերյալ թիվ 8 հաշվետվություն. 16 օգոստոս – 22 օգոստոս 2014թ.*, 22 օգոստոս 2014թ., էջ 4, <http://shar.es/11YROL>: Տե՛ս նաեւ ՄԱԿ ՄԳՀԳ, *Ավանդակ հումանիտար կարիքների վերաբերյալ*, 26 սեպտեմբեր 2014թ., էջ 13, <http://bit.ly/1xoOFCd>:

ծառայություններից:⁸⁶ Նշվում է, որ ներքին տեղահանված անձանցից շատերին բժշկական եւ հոգեբանական աջակցություն է անհրաժեշտ, քանի որ նրանք ականատես են եղել տրավմատիկ դեպքերի:⁸⁷

22. Չունենալով եկամուտ եւ սպառելով իրենց խնայողությունները, եթե այդպիսիք կային, ներքին տեղահանված անձինք կարող են հարկադրված լինել կրկին տեղահանվել:⁸⁸ Ձեկույցների համաձայն՝ ներքին տեղահանված անձինք ստիպված են եղել իրենց ծագման նահանգ վերադառնալ կամ կրկին տեղահանվել Իրաքի այլ հատվածներ, քանի որ անկարող են մնալ Իրաքի Քուրդիստանում, որտեղ ապրելու համար մեծ ֆինանսական միջոցներ են անհրաժեշտ:⁸⁹

23. Ներքին տեղահանված անձանց համար ավելի է դժվարանում անձը հաստատող այնպիսի փաստաթղթերի ձեռքբերումը կամ վերականգնումը, ինչպիսիք են օրինակ անձնագրերը, Մննդի բաշխման հանրային համակարգից օգտվելու պարենային քարտերը եւ քաղաքացիության վերաբերյալ տեղեկանքները, քանի որ դրա համար սովորաբար անհրաժեշտ է վերադառնալ ծագման վայր, որտեղ պահպանվում են արխիվային փաստաթղթերը. ներկայումս շատերի համար սա անիրագործելի տարբերակ է:⁹⁰ Փաստաթղթերի փոխարինման հետ կապված գործառույթներ իրականացնելու նպատակով Բաղդադում եւ Նաջաֆում հատուկ ծառայություններ են ստեղծվել, այնուամենայնիվ, երկրի այլ հատվածներում, հատկապես Իրաքի Քուրդիստանում բնակվող ներքին տեղահանված անձանց հեշտ չէ օգտվել այդ ծառայություններից նաեւ ճանապարհածախսի պատճառով: Առանց վավեր անհրաժեշտ փաստաթղթերի՝ ՆՏԱ հնարավոր է չկարողանան գրանցվել տեղական իշխանության մամիններում (Իրաքի Քուրդիստանում) կամ Տեղահանության եւ միգրացիոն հարցերով նախարարությունում (ՏՄՆ, կենտրոնական կառավարության վերահսկողության ներքո գտնվող շրջաններում), որի պատճառով նրանք չեն կարողանա օրինականացնել իրենց կացությունը եւ լիովին օգտվել աջակցությունից եւ հանրային ծառայություններից:⁹¹ Տեղեկություններ կան այն մասին, որ ներքին տեղահանված անձանց անձը հաստատող փաստաթղթերը բռնագաբաղվում են իշխանությունների կողմից՝ նրանց տեղաշարժը վերահսկելու նպատակով:⁹²

23. Չնայած հարյուր հազարավոր տեղահանված իրաքցիներ մեծահոգի ընդունելության են արժանացել հատկապես Իրաքի Քուրդիստանում՝ պարբերաբար հաղորդվում է, որ բնակչության

⁸⁶ ՄԱԿ ՄԳՀԳ, *Իրաքում ներքին տեղահանությանը պայմանավորված ձգնաժամային իրավիճակի վերաբերյալ թիվ 12 հաշվետվություն*, 13 սեպտեմբեր-19 սեպտեմբեր 2014թ., 19 սեպտեմբեր 2014թ., էջ 5, տե՛ս նաև հետևյալ հղումով՝ <http://reliefweb.int/sites/reliefweb.int/files/resources/Iraq.pdf>:

⁸⁷ ՄԱԿ ՄԳՀԳ, *Ակնարկ հումանիտար կարիքների վերաբերյալ*, 26 սեպտեմբեր 2014թ., էջ 15, <http://bit.ly/1xoOfCD>: EU Reporter լրատվական կայք, *ՄՄԳ-ի համաձայն՝ հակամարտության հետեանքով ավելի քան 1.6 մլն մարդ է տեղահանված Իրաքում*, 29 օգոստոս 2014թ., <http://www.eureporter.co/world/2014/08/29/more-than-1-6-million-internally-displaced-by-iraq-conflict-says-iom/>; ACTED, *Իրաքի Քուրդիստանի Աինկավա քաղաք տեղահանված երեխաների պաշտպանությունն ապահովվելու անհրաժեշտությունը*, 18 օգոստոս 2014թ., <http://www.acted.org/en/child-protection-needs-children-displaced-ainkawa-kurdistan-region-iraq>; «Բժիշկներ առանց սահմանների», *Իրաք/Սիրիա. Միևջարում տիրող բռնությունից փախուստի դիմող ներքին տեղահանված անձանց կտրուկ աճ*, 13 օգոստոս 2014թ., <http://www.msf.ca/en/article/iraqsyria-dramatic-increase-displaced-people-fleeing-violence-sinjar>:

⁸⁸ REACH, *Հյուսիսային Իրաքում ներքին տեղահանված անձանց խոցելիությունը, կարիքները եւ մտադրությունը*. Արագ գնահատման հաշվետվություն, 30 մարտ 2014թ., տե՛ս նաև հետևյալ հղումով՝ <http://shar.es/1mow8j>:

⁸⁹ ՄԱԿ, *Տեղահանված անձանց տեղաշարժերին հետեւելու ծրագիր*, VI շրջան, III հաշվետվություն, հոկտեմբեր 2014թ., էջ 4, <http://iomiraq.net/file/1270/download?token=aH5gss0>; ՄԱԿ ՄԳՀԳ, *Իրաքում ներքին տեղահանությանը պայմանավորված ձգնաժամ*, թիվ 5 հաշվետվություն՝ իրավիճակի վերաբերյալ, 27 հուլիս-1 օգոստոս 2014թ., 1 օգոստոս 2014թ., էջ 1, <http://reliefweb.int/sites/reliefweb.int/files/resources/OCHA%20Iraq%20Situation%20Report%20no5.pdf>, Ալ Ջազիրա, *Ապաստանի որոնումներ Իրաքի Քուրդիստանում*, 30 մարտ 2014թ., տե՛ս նաև հետևյալ հղումով՝ <http://aje.me/1h8A36d>:

⁹⁰ ՄԱԿ ՄԳՀԳ, *Ակնարկ հումանիտար կարիքների վերաբերյալ*, 26 սեպտեմբեր 2014թ., էջ 15, տե՛ս նաև հետևյալ հղումով՝ <http://bit.ly/1xoOfCD>:

⁹¹ ՄԱԿ ՄԳՀԳ, *Իրաքում ձգնաժամային իրավիճակի վերաբերյալ թիվ 15 հաշվետվություն*, 4 հոկտեմբեր - 10 հոկտեմբեր 2014, 10 հոկտեմբեր 2014թ., էջ 5, <http://shar.es/1mGj5P>:

⁹² Ինչպես հաղորդվում է Քուրդիստանի Ասայիշ (*Asayish*) անվտանգության ծառայությունը հաճախ բռնագաբաղվում է ՆՏԱ փաստաթղթերը խստորեն սահմանափակելով նրանց տեղաշարժի իրավունքները: ՄԱԿ ՓԳՀ, հոկտեմբեր 2014թ.: Տե՛ս նաև ՄԱԿ ՄԳՀԳ, *Իրաքում ներքին տեղահանությանը պայմանավորված ձգնաժամային իրավիճակի վերաբերյալ թիվ 14 հաշվետվություն*, 26 սեպտեմբեր - 3 հոկտեմբեր 2014թ., էջ 6, տե՛ս նաև հետևյալ հղումով՝ <http://shar.es/1mowRL>:

տարբեր խմբեր չեն կարողանում անվտանգ տարածքներ տեղափոխվել, այդ թվում շարունակվող մարտերի եւ նահանգների սահմաններն անցնելու սահմանափակումների պատճառով:⁹³ Հնարավոր է, որ այդ սահմանափակումները որոշակի չափով պայմանավորված են անվտանգության նկատառումներով⁹⁴ եւ այն պատճառով, որ տեղական մարմիններն անկարող են նման մեծ թվով անձանց իրենց տարածք ընդունել:⁹⁵ Նաեւ հաղորդվում է, որ սահմանափակումները խստացվում են:⁹⁶ Նման սահմանափակումներն, ըստ երեւույթին, պայմանավորված են նաեւ մի շարք այնպիսի չափանիշներով, ինչպիսիք են ընտանիքի կազմը,⁹⁷ կրոնական-էթնիկ պատկանելությունը,⁹⁸ ծագման վայրը⁹⁹ կամ պահանջն այն մասին, որ տվյալ նահանգում անձն ունենա երաշխավոր:¹⁰⁰ Անցակետերում կիրառվող չափանիշները կարող են երբեմն հստակ սահմանված չլինել եւ/կամ դրանք կարող են տարբեր վայրերում տարբեր կերպ կիրառվել կամ անսպասելի փոփոխվել: Ինչպես հաղորդվում է, որոշակի շրջաններում անձանց,

⁹³ «Բազմաթիվ ներքին տեղահանված անձինք փախուստի են դիմել առանց ինքնությունը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերի, այդ պատճառով Պեշմերգայի վերահսկողության ներքո գտնվող Իրաքի Քուրդիստանի եւ մոտ գտնվող նահանգների վիճելի տարածքների սահմանների բազմաթիվ անցակետերում զգալիորեն սահմանափակվում է նրանց տեղաշարժի ազատությունը»: ACAPS ծրագիր, *Տեղեկատվական թերթիկ. Բռնության հումանիտար հետեւանքները Հյուսիսային եւ Գենտրոնական Իրաքում*, 4 սեպտեմբեր 2014թ. տե՛ս հետեւյալ հղումով՝ <http://shar.es/1j9od>:

⁹⁴ Օրինակ, մի շարք խմբերի համար հատկապես դժվարացել է մուտք գործել Իրաքի Քուրդիստան, քանի որ համաձայն բյուրոկրատական եւ անվտանգության ընթացակարգերի սահմանափակումներ են սահմանված ՆՏԱ ազատ տեղաշարժի վերաբերյալ: ՄԱԿ ԿԳՀԳ, *Իրաքում ներքին տեղահանության պայմանավորված ճգնաժամային իրավիճակի վերաբերյալ թիվ 13 հաշվետվություն. 20 սեպտեմբեր – 26 սեպտեմբեր 2014թ.*, 26 սեպտեմբեր 2014թ., էջ 2, տե՛ս հետեւյալ հղումով՝ <http://shar.es/1moJUD>:

⁹⁵ Օրինակ, հաղորդվում է, որ Քերբալայում երաշխավոր չունեցող ներքին տեղահանված անձանց տեղահանում են այլ նահանգներ, քանի որ տեղական իշխանության մարմինները նշում են, որ այլեւս անկարող են մարդկանց ընդունել իրենց տարածք: ՄԱԿ ՄԳՀԳ, *Իրաքում ներքին տեղահանության պայմանավորված ճգնաժամային իրավիճակի վերաբերյալ թիվ 8 հաշվետվություն. 16 օգոստոս – 22 օգոստոս 2014թ.*, 22 օգոստոս 2014թ., էջ 4, <http://shar.es/11YROL>: Հաղորդվում է, որ 2014թ. հոկտեմբերի կեսերին Հիթից (Ալ-Անբար) վերջերս տեղահանված անձանց թույլ չեն տվել մուտք գործել հարեւան Քերբալա նահանգ: ՄԱԿ ՄԳՀԳ, *Իրաքում ներքին տեղահանության պայմանավորված ճգնաժամային իրավիճակի վերաբերյալ թիվ 16 հաշվետվություն. 11-17 հոկտեմբեր 2014թ.*, 17 հոկտեմբեր 2014թ., էջ 2, տե՛ս հետեւյալ հղումով՝ <http://shar.es/1mQFIC>:

⁹⁶ ՄԱԿ ՓԳՀ, 2014թ. հոկտեմբեր:

⁹⁷ Օրինակ, ՄԱԿ-ի՝ Իրաքում աջակցության առաքելությունը հաղորդել է, որ սահմանափակումներ են գործում կանանց եւ աղջիկների Իրաքի Քուրդիստան մուտք գործելու վերաբերյալ, էթնո-կրթական չի ուղեկցում արական սեռի ներկայացուցիչ, որը նրանց բարեկամ է: Իրաքում ՄԱԿ-ի աջակցության առաքելություն/ՄԻԶԳՀ, Ձեկնույց Իրաքում ոչ միջազգային բնույթ կրող հակամարտության ընթացքում քաղաքացիական բնակչության պաշտպանության վերաբերյալ. *5 հունիս – 5 հուլիս 2014թ.*, 18 հուլիս 2014թ., էջ 21, <http://www.refworld.org/docid/53ce0f0d4.htm>: Ինչպես հաղորդվում է Բարսա նահանգի ներքին սահմանների անցակետերում միայնակ տղամարդկանց թույլ չեն տվել մուտք գործել տվյալ տարածք: ACAPS ծրագիր, *Տեղեկատվական թերթիկ. Բռնության հումանիտար հետեւանքները Հյուսիսային եւ Գենտրոնական Իրաքում*, 24 հուլիս 2014թ., էջ 4, տե՛ս հետեւյալ հղումով՝ <http://shar.es/11jsZa>:

⁹⁸ Ըստ երեւույթին փոքրամասնությունների ներկայացուցիչները կարողանում են մուտք գործել Իրաքի Քուրդիստան, մինչդեռ, ինչպես հաղորդվում է, սունիթ եւ շիա արաբներին եւ թուրքմեններին արգելված է մուտք գործել տվյալ տարածք: Օրինակ, հաղորդվում է, որ Դիյալա նահանգի Ջալալա եւ Մաադիյա քաղաքներից փախուստի դիմող ներքին տեղահանված սունիթ արաբներին թույլ չեն տալիս մուտք գործել Իրաքի Քուրդիստան, քանի որ կանխաձեռն են, որ հնարավոր է նրանք հավանություն են տալիս ԻՊ-ին եւ այդ պատճառով անվտանգության համար սպառնալիք են համարվում: Ինչպես հաղորդվում է, նրանք բնակվում են ճամբարներում՝ Դիյալայի՝ քրդերի կողմից վերահսկվող խնդրո առարկա հանդիսացող տարածքներում՝ Իրաքի Քուրդիստանի սահմանին մոտ, սակայն նրանց ազատ տեղաշարժի իրավունքը սահմանափակ է: Christian Science Monitor լրատվական կայք, *Քուրդիստանում սունիթ արաբներին օգնություն է տրամադրվում, սակայն նրանց վերաբերյալ կասկածներ կան*, 28 օգոստոս 2014թ., <http://bit.ly/WsK5x7>: Տե՛ս նաեւ New York Times թերթ, *Ետ եւ առաջ, ԻՇԻՊ-ի սահմանը*, 20 սեպտեմբեր 2014թ., <http://nyti.ms/1rakK5j>: Public Radio International, *Հյուսիսային Իրաքում քրդերը իրենց հարեւան արաբներին կասկածում են ԻՇԻՊ-ին սատարելու մեջ*, 1 սեպտեմբեր 2014թ., <http://bit.ly/ZQYzbH>: Associated Press գործակալություն, *Տեղահանված իրաքցիները պատրաստ են պատերազմ փոխանակել դժվարություններով լի կյանքի հետ*, 14 օգոստոս 2014թ., <http://fxn.ws/1sZCwKb>: ACAPS ծրագիր, *Տեղեկատվական թերթիկ. Բռնության հումանիտար հետեւանքները Հյուսիսային եւ Գենտրոնական Իրաքում*, 24 հուլիս 2014թ., 24 հուլիս 2014թ., էջ 1, <http://shar.es/11jsZa>: IRIN ((Տարածաշրջանային տեղեկատվական ընդհանուր ցանց), *Ընտրողական վերաբերմունք Քուրդիստանում ներքին տեղահանված անձանց նկատմամբ*, 16 հուլիս 2014թ., տե՛ս հետեւյալ հղումով՝ <http://www.refworld.org/docid/53ce19aa4.html>:

⁹⁹ Հաղորդվում է, որ մուտքը սահմանափակ է Քիրքուքից Էրբիլ նահանգ մտնել փորձող անձանց համար: ՄԱԿ ՄԳՀԳ, *Իրաքում ներքին տեղահանության պայմանավորված ճգնաժամային իրավիճակի վերաբերյալ թիվ 11 հաշվետվություն. 6 սեպտեմբեր – 12 սեպտեմբեր 2014թ.*, 12 սեպտեմբեր 2014թ., էջ 1, տե՛ս հետեւյալ հղումով՝ <http://shar.es/1a000z>:

¹⁰⁰ Օրինակ, հաղորդվում է, որ Քադիսիա նահանգ տեղափոխվել փորձող ներքին տեղահանված անձանց թույլ են տվել անցնել անցակետերը, երե հաստատվել է, որ նրանց համար երաշխավորել են բարեկամները: ՄԱԿ ՄԳՀԳ, *Իրաքում ներքին տեղահանության պայմանավորված ճգնաժամային իրավիճակի վերաբերյալ թիվ 10 հաշվետվություն. 30 օգոստոս – 5 սեպտեմբեր 2014թ.*, 5 սեպտեմբեր 2014թ., էջ 4, <http://shar.es/11ARZD>: Սունիթ եւ շիա արաբները, թուրքմենները, ինչպես նաեւ շաբաբները, որոնք փորձում են Իրաքի Քուրդիստան տեղափոխվել, պետք է երաշխավոր ունենան, որ պետք է լինի Քուրդիստանում բնակվող ազգությամբ քուրդ: Եթե ներքին տեղահանված անձինք երաշխավոր չունեն, ապա նրանց թույլ չի տրվում անցնել անցակետերը: ՄԱԿ ՄԳՀԳ, *Իրաքում ներքին տեղահանության պայմանավորված ճգնաժամային իրավիճակի վերաբերյալ թիվ 13 հաշվետվություն. 20 սեպտեմբեր – 26 սեպտեմբեր 2014թ.*, 26 սեպտեմբեր 2014թ., էջ 5, <http://shar.es/1moJUD>: Համաձայն ՄԱԿ ՓԳՀ տեղեկատվության քուրդ երաշխավորներն այլեւս չեն ուզում հանդես գալ որպես սունիթ արաբների երաշխավոր, մասնավորապես, որովհետեւ հոգնել են գթասիրտ լինելուց եւ չեն ուզում աջակցություն ցուցաբերել սունիթ արաբներին, որոնց երբեմն կասկածում են ԻՊ-ի եւ այլ զինված խմբավորումների հետ կապ ունենալու մեջ: ՄԱԿ ՓԳՀ 2014թ. հոկտեմբեր:

որոնք փորձում են մեկ նահանգից մյուսն անցնել, արգելում են մուտք գործել տվյալ նահանգ:¹⁰¹ Նույնիսկ եթե թույլատրվում է մուտք գործել տվյալ նահանգ, ներքին տեղահանված անձանց կարող են հավելյալ պահանջներ ներկայացվել, որպեսզի նրանք կարողանան գրանցվել տեղական իշխանության մարմիններում:¹⁰² Հաղորդվում էր, որ Իրաքի հարավում ներքին տեղահանված անձինք տեղափոխվում էին մեկ նահանգից մեկ այլ նահանգ փնտրելով տեղական իշխանության մարմիններ, որոնք կհամաձայնվեին գրանցել նրանց, որպեսզի նրանք կարողանային օգտվել բժշկական ծառայություններից, կրթական հնարավորություններից և դրամական օգնությունից:¹⁰³ Բացի այդ, ինչպես հաղորդվում է, ՆՏԱ ժամանումների հետեւանքով համայնքներում էթնիկ-աղանդավորական գործոնով պայմանավորված լարվածություն է առաջացել,¹⁰⁴ իսկ ներքին տեղահանված անձինք զգում են, որ պաշտպանված չեն և խտրականության են ենթարկվում:¹⁰⁵

25. Հաղորդվում է, որ ՆՏԱ տեղաշարժի ազատությունը սահմանափակված է նաեւ վտանգավոր իրավիճակի և իրականացվող ռազմական գործողությունների պատճառով:¹⁰⁶ Ավելին, հաղորդվում է, որ զինված խմբավորումները զգալի կերպով վերահսկում են երկրի կենտրոնական/հյուսիսային հատվածները Բաղդադի և երկրի հարավային հատվածներին միացնող ճանապարհները:¹⁰⁷ Անհրաժեշտ փաստաթղթեր չունեցող ներքին տեղահանված անձինք անցակետերն անցնելիս կարող են դժվարությունների հետ բախվել:¹⁰⁸

26. Չնայած մոտ ապագայում վերադարձի լայնամասշտաբ դեպքեր չեն ակնկալվում, համաձայն հաշվետվությունների՝ փոքր թվով ՆՏԱ սկսել են իրենց ծագման վայրեր վերադառնալ այն

¹⁰¹ Օրինակ, ինչպես հաղորդվում է, սեպտեմբերի սկզբին/կեսերին Քիրքուքում ՆՏԱ նոր ժամանումներ չեն արձանագրվել այն պատճառով, որ անցակետերը չեն կարող անցնել անձինք, որոնք չունեն Քիրքուքում տրվող ինքնությունը հաստատող հատուկ փաստաթուղթ: Հաղորդվում է, որ ՆՏԱ մուտքը Խանաքին (Դիյալա, գտնվում է Քրդական ուժերի վերահսկողության ներքո) սահմանափակվել է տեղական իշխանությունների կողմից, և որոնք որպես դրա պատճառ նշում են կացարանի բացակայությունը և անվտանգության նկատառումները: ՄԱԿ ՄԳՀԳ, *Իրաքում ներքին տեղահանությանը պայմանավորված ճգնաժամային իրավիճակի վերաբերյալ թիվ 10 հաշվետվություն*, 30 օգոստոս - 5 սեպտեմբեր 2014 թ., 5 սեպտեմբեր 2014 թ., էջ 4, <http://shar.es/11ARZD>: Տե՛ս նաեւ ՄՄԿ, *Տեղահանված անձանց տեղաշարժերին հետեւելու ծրագիր*, VI շրջան, թիվ III հաշվետվություն, հոկտեմբեր 2014 թ., էջ 5, <http://iomiraq.net/file/1270/download?token=aH5gss0>:

¹⁰² Եթե թույլատրվում է մուտք գործել տվյալ տարածք, ապա անձանց, որոնք ծագումով Քուրդիստանից չեն, տրվում է Քուրդիստանում 15 օր «մնալու թույլտվություն»: Այս ժամանակահատվածում նրանք պետք է դիմեն համապատասխան մարմիններին ժամանակավոր կացության թույլտվություն ստանալու համար, որի համար անձը պետք է ունենա երաշխավոր, տեղեկանք անվտանգության տեղական ծառայության կողմից (*Ասայիջ*), և անցնի բուժզննում: ՄԱԿ ՓԳՀ-ն նշել է սույն կանոնակարգերի խիստ պահպանումը, ինչպես նաեւ անվտանգության նկատառումների վրա հիմնված մերժումները: Կացության համար տրված թույլտվությունը հարկ է երկարացնել պարբերաբար՝ սովորաբար յուրաքանչյուր 7-10 օրվա ընթացքում:

¹⁰³ REACH, *Շիա շաբաբ և թուրքմեն փոքրամասնությունների տեղահանությունը Տալ Աֆարից և Նայնավայի հարթավայրերից հունիս - 18 օգոստոս 2014 թ.*, 18 օգոստոս 2014 թ., էջ 3, տե՛ս նաեւ հետեւյալ հղումով՝ <http://shar.es/11jici>:

¹⁰⁴ «Էթնիկ-աղանդավորական տարբերություններն էական են, և հնարավոր է, որ սոցիալական լարվածություն կստեղծվի բնակչության տարբեր խմբերի միջև: ԻԼԻՊ-ի և դրա համախոհների պատճառով սկզբնական տեղահանությունը, վատագույն դեպքում ընդունող համայնքների հետ հնարավոր ագրեսիվ դիմակայության կամ լավագույն դեպքում անբարյացակամ վերաբերմունքի արդյունքում կարող է նաեւ հանգեցնել երկրորդ տեղահանությանը (կամ երրորդ, կամ չորրորդ): Իրաքում պատշաճ միջոցառումներ չեն ձեռնարկվել տարբեր էթնիկ խմբերի միջև պատմականորեն ստեղծված լարվածությունը վերացնելու համար և կարելի է ենթադրել, որ այն համայնքների, հատկապես նոր տեղահանված անձանց և ընդունող համայնքների միջև հակամարտության սրացմանը նպաստող առանցքային գործոն է: Իրաքի հարավային և կենտրոնական հատվածներից Իրաքի Քուրդիստանի Էրբիլ և Սուլեյմանիա ՆՏԱ ժամանումների դեմ կազմակերպվել են մի շարք բողոքի ակցիաներ: Բշխանությունների կողմից հայտարարություններ են եղել, որ ՆՏԱ հարկադրաբար «կտեղահանվեն», եթե հաշվի չառնվեն ընդունող համայնքների պահանջները»: ՄԱԿ ՄԳՀԳ, *Ակնարկ հումանիտար կարիքների վերաբերյալ*, 26 սեպտեմբեր 2014 թ., էջ 13-14, <http://bit.ly/1xoQFCD>:

¹⁰⁵ Օրինակ, Ալ-Անբար նահանգից ներքին տեղահանված անձինք նշում էին, որ անվտանգ չեն զգում Իրաքում «Անբարից տեղահանված անձանց նկատմամբ թշնամական վերաբերմունքի» պատճառով: Հաղորդվում է, որ նրանցից շատերը որոշել են չգրանցվել տեղական մարմիններում վախենալով որ իրենց «ախարեկիչներ» կհամարեն, կձերբակալեն և ճնշումների կենթարկեն: ՄԱԿ ՓԳՀ տեղեկատվություն, 2014 թ. հոկտեմբեր: Տե՛ս նաեւ IRIN (Տարածաշրջանային տեղեկատվական ընդհանուր ցանց), *Բաղդադում Անբար նահանգից ներքին տեղահանված անձինք վախենում են իրենց անվտանգության համար*, 13 մայիս 2014 թ., <http://www.refworld.org/docid/5379d6464.html>: Տե՛ս նաեւ Associated Press գործակալություն, *Իրաքի արարները պնդում են, որ հետապնդումների են ենթարկվում քրդերի կողմից*, 30 սեպտեմբեր 2014 թ., <http://yhoo.it/1vTKmUP>:

¹⁰⁶ ՄԱԿ ՄԳՀԳ, *Իրաքում ներքին տեղահանությանը պայմանավորված ճգնաժամային իրավիճակի վերաբերյալ թիվ 14 հաշվետվություն*, 26 սեպտեմբեր - 3 հոկտեմբեր 2014 թ., 3 հոկտեմբեր 2014 թ., էջ 2, տե՛ս նաեւ հետեւյալ հղումով՝ <http://shar.es/1mowRL>:

¹⁰⁷ IRIN (Տարածաշրջանային տեղեկատվական ընդհանուր ցանց), *Շտաբային վերաբերմունք Քուրդիստանում ներքին տեղահանված անձանց նկատմամբ*, 16 հունիս 2014 թ., տե՛ս նաեւ հետեւյալ հղումով՝ <http://www.refworld.org/docid/53ce19aa4.html>:

¹⁰⁸ ACAPS ծրագիր, *Տեղեկատվական թերթիկ. Բնության հումանիտար հետեւանքները Հյուսիսային և Կենտրոնական Իրաքում*, 4 սեպտեմբեր 2014 թ., էջ 4, տե՛ս նաեւ հետեւյալ հղումով՝ <http://shar.es/11zUYn>:

